Azg
armenian daily
5 ՄԱՅԻՍ 2004 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 81 (3004)

Հայ-աջարական բախում Զավախքում

Սխալքալաքի շրջանի հայաբնակ Ազմանա գյուղում մայիսի 2-ին ընդհարում է տեղի ունեցել հայերի եւ այստեղ վերաբնակեցված աջարների միջեւ, հաղորդում է Ա-Ինֆո գործակալությունը: Աջարներն ավերել են Թելման Փամբուխչյանին պատկանող ծկնաբուծարանը հարեւան Կարցեռ գյուղում, ինչը եւ պատճառ է դարձել բախումների, որոնց հետեւանքով հայերից մեկը ստացել է ծանր մարմնական վնասվածք եւ տեղափոխվել հիվանդանոց: Ազմանա գյուղի բնակիչներից Յուրի Փամբուխչյանն ասել է, որ Աջարիայում ստեղծված լարված վիճակն անհանգստություն է պատճառել Սխալքալաքում վերաբնակեցված աջարների շրջանում, որոնց մի մասն արդեն մեկնել է Աջարիա՝ աջակցելու Ասլան Աբաշիձեին: «Տեղացի վրացիները, որոնք աջարների վրա ազդեցություն ունեն, փորձում են վրաց-աջարական հակամարտությունը շեղել հայերի եւ աջարների միջեւ հակամարտության», ասել է նա: Ա-Ինֆոն մեջբերում է Ազմանայում ոստիկանության ներկայացուցիչ Զազա Տավարտղիլաձեի խոսքերը, որը ՆԳՆ շարքեր ընդունվելիս խոստացել է, որ «հայերին կդնի իրենց տեղը»:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ

Իրադրությունը պահանջում է կենտրոնացնել ողջ հայության ուժերը

ՈՒՍԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«Ուղղակի անգնահատելի է Ամերիկայում եւ Եվրոպայում գործող հայկական կազմակերպությունների վերջին տարիների կատարած աշխատանքը: Այդ երկրներում նրանք կարծիք են ձեւավորել Հայաստանի մասին՝ մեծապես նպաստելով մեր երկրի զարգացմանը: Տարածաշրջանում այսօր մրցակցությունն ավելացել է, ինչը մեզ պարտադրում է ողջ հայության ուժերը կենտրոնացնել, որպեսզի կարողանանք մեր ժողովրդի համար դրական արդյունքներ ձեռք բերել», երեկ լրագրողների հետ ունեցած ճեպազրույցի ժամանակ ասաց արտգործնախարար Վարդան Օսկանյանը: «Հայաստան-սփյուռք» խորհրդաժողովի շրջանակներում մայիսի 3-4-ը «Արմենիա» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում տեղի ունեցավ իրազեկման աշխատանքային խմբի հանդիպում, որին մասնակցեցին Մ. Նահանգների ու Եվրոպայի հայկական կազմակերպությունների

ներկայացուցիչներ ու առանձին անհատներ՝ Ամերիկայի հայկական համագումարը, Ամերիկայի հայկական կոմիտեն, Եվրամիության Հայ դատի գրասենյակը, ՌԱԿ համաստենաժեսը, ՀՅԴ հանձնախմբերի ղեկավարներն ու եվրոպական մի շարք երկրների հայկական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Պրն Օսկանյանը նշեց, որ հայկական կազմակերպությունները ծավալում են հայանպաստ գործունեություն՝ արդյունավետ կիրառելով Հայաստանի արտաքին քաղաքականության գերակա ուղղությունները, որոնք են երկրի անվտանգությունը, զարգացումը, եվրոպական ինտեգրացիան, Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորումն ու մեր պատմական իրավունքների ու արժեքների պահպանումը: Այս ուղղությունները մանրամասն քննարկվել են հանդիպման ընթացքում. «Այս իմաստով շատ օգտակար հանդիպում էր, որովհետեւ իսկապես անհրաժեշտություն կար նրանց տեղեկացնելու մեր արտաքին քաղաքականության հիմնական խնդիրների, առաջնայնությունների, ուղղությունների ու դրանց հիմնավորման մասին, որպեսզի իրենց աշխատանքներում դրանք կիրառելի դառնան»:

Տես էջ 2

ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ

Գարեգին Բ կաթողիկոսը Բրազիլիայում

Մայիսի 4-ին, Բրազիլիայի ժամանակով ժամը 5:10-ին, Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը ժամանեց Բրազիլիա, որտեղից եւ կսկսվի Վեհափառ հայրապետի հովվապետական անդրանիկ այցը Հարավային Ամերիկայի հայոց թեմեր:

Չնայած վաղ առավոտին, Բրազիլիայի Սան Պաուլո օդանավակայանում, Հայոց հայրապետի օրհնաբեր այցին էին սպասում բազմաթիվ բրազիլահայեր՝ թեմակալ առաջնորդ Տ. Տաթեւ արք. Պարիբյանի գլխավորությամբ: Նրանց էր միացել նաեւ Արգենտինահայ համայնքային ներկայացուցիչների պատվիրակությունը Արգենտինայի թեմի առաջնորդ Տ. Գիսակ արք. Սուրադյանի առաջնորդությամբ:

Օդանավակայանի պատվավոր հյուրերի ընդունելության սրահում կարճատեւ դադարից հետո Վեհափառ հայրապետն իր շախմբով ուղղվեց դեպի Սան Պաուլո՝ պետական պատիվներով ու արարողակարգով: Մայիսի 5-ի առավոտյան Վեհափառ հայրապետը «Հրաշափառով» մուտք կգործի Սան Պաուլոյի առաջնորդանիստ Սբ. Գեւորգ եկեղեցի՝ իր օրհնությունը տալու բրազիլահայ հավատացյալներին:

Ընդդիմությունը 10-օրյա դադար վերցրեց

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հանրահավաքից հանրահավաք նոր մանրամասներ են երեւան գալիս Ազատության հրապարակում, որոնք ներքաղաքական հակամարտության ու ժողովրդական տրամադրությունների իրական ցուցիչն են: Բաղրամյան պողոտա տանող ճանապարհին ջրցան մեքենաներ են, զինվորականների խուռն խմբեր ոչ միայն այստեղ, այլեւ կենտրոնի մյուս հատվածներում: Իշխանությունը սպասողական վիճակում է, բայց թե ինչ է ձեռնարկելու, երեւի իրեն էլ հայտնի չէ: Ընդդիմության լիդերները նույն խանդավառ տրամադրության մեջ են, բայց ինչ լինելիքի անորոշությունն իրենց էլ է համակել: Թերեւս այդ է պատճառը, որ «Հանրապետություն» կուսակցության առաջնորդ Ալբերտ Բազեյանը հայտարարեց, որ իրենք 10-օրյա ընդմիջում են վերցնում: Այդ ընթացքում հնարավոր է, որ ընդդիմությունն ընդառաջ գնա քաղաքական երկխոսության, բայց գլխավոր պահանջը նույնն է լինելու՝ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնանկություն կամ հրաժարական: Կամ էլ ընդդիմությունը ժողովրդի հետ «յուրահատուկ վստահության հանրաքվե է անցկացնելու»:

Կրկին չարտոնված հանրահավաքում այս անգամ նախորդներից տարբեր էր նաեւ մարդկային կազմը՝ հիմնականում գորշ գույներ, ժողովրդական խեղճ, անճար զանգված, որ հուզիչ դյուրահավատությամբ հույսը

կապում է շարժման այս նոր, տարուբերվող ալիքի հետ: Ազատության հրապարակի նոր երանգը նաեւ եվրամիության դրոշներն էին՝ անձրեւանոցների ու յուրաքանչյուր 2 մետրը մեկ վեր խոյացած Արտաշես Գեղամյանի լուսանկարի հետ: Կարելի է չկասկածել, որ հանրահավաքային զանգվածը սոցիալական հիմնախնդիրների լուծման ճանապարհը կապում է իր հայտնաբերած նոր մարգարեի հետ:

Տես էջ 2

Քաան Սոյակ. Հայաստանի շրջափակումը Թուրքիային ոչինչ չտվեց

Թուրք-հայկական բիզնես խորհրդի համանախագահ Քաան Սոյակն ադրբեջանական «525 գազեթ» պարբերականին տված հարցազրույցում ասել է, որ Հայաստանի շրջափակումը Թուրքիային ոչինչ չտվեց: «Սահմանի 11-ամյա փակ լինելը ոչինչ չտվեց, ավելին՝ Հայաստանն ընդլայնեց առեւտրային կապերը եւ Թուրքիայի, եւ Իրանի, եւ Ռուսաստանի հետ: Հայաստանի առեւտրի մեծ մասն իրականացվում է նաեւ Վրաստանով, գործում է Նովոռոսիյսկ-Փոթի-Հայաստան-Իրան տրանսպորտային միջանցքը», ասել է Սոյակը:

Աբիեւը Երեւան չի գա

ԲԱՔՈՒ, 4 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի պաշտպանության նախարար Սափար Աբիեւը հայտարարել է, որ չի մասնակցի այս ամիս Երեւանում կայանալիք ԱՊՀ պաշտպանության նախարարների հանդիպմանը: Նա ասել է, թե «մենք չենք թակում մեր թշնամու դուռը»:

Քաղավիացիայի նոր պետ

ԵՐԵՎԱՆ, 4 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի որոշմամբ Սամվել Մարգարյանն ազատվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի պաշտոնից, նրա փոխարեն այդ պաշտոնին է նշանակվել Արտյոմ Սովսիսյանը:

Արտյոմ Սովսիսյանը էլեկտրոնային տեխնիկայի ինժեներ է, իրավաբան: Մինչ նշանակումը աշխատել է ՀՀ նախագահի աշխատակազմում, իբրեւ առաջատար, այնուհետեւ՝ գլխավոր մասնագետ, իշխանության հանրապետական մարմինների բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, խորհրդատու: Անկուսակցական է:

Ինչո՞ւ վաճառվեց կենտրոնական բանկի ոսկին եւ ինչո՞ւ արժեզրկվեց դոլարը

Այս հարցերին պատասխանեց Տիգրան Սարգսյանը

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պատասխանելով **«Ազգի»**՝ «Ինչո՞վ էր պայմանավորված մի քանի օրվա ընթացքում դոլարի կտրուկ արժեզրկումը ազգային դրամի նկատմամբ» հարցին, Տիգրան Սարգսյանը թվարկեց դրան նպաստող չորս գործոններ, վերլուծաբաններին թողնելով պարզելու, թե դրանցից որն է առավել մեծ չափով ազդել փոխարժեքի տատանումների վրա: Մինչ այդ նա նշեց, որ մեր ֆինանսական շուկայի ծավալներն այնքիսին են, որ որեւէ սուբյեկտ կամ սուբյեկտների խումբ չեն կարող ոչ խելամիտ գործողություններով ազդել շուկայի վրա, այլ խոսքերով՝ սպեկուլյացիոն գործողություններ կատարել: Ինչ մնում է վերեւում հիշատակած գործոններին, առա դրանցից առաջինը համախառն ներքին արդյունքի աճն է: Դա թույլ է տալիս հետեւել շրջանառության մեջ գտնվող փողի քանակին:

Եթե դրամի քանակն ավելանում է, դա նշանակում է, որ նրա պահանջարկը կա: Փողի քանակի ավելացումը կամ նվազումը ցույց տվող երկրորդ ցուցանիշը սղաճն է: Երրորդը երկրի վճարային հաշվեկշիռն է: Այս տարվա առաջին եռամսյակում աննախադեպ (մոտ 40 տոկոսով) աճել է արտահանումը եւ մոտ 30 տոկոսով՝ մասնավոր գումարային փոխանցումները դեպի Հայաստան: Այս արտարժութային հոսքերը, բնականաբար, ազդել են դոլար-դրամ փոխարժեքի վրա: Չորրորդ գործոնը աշխատուժի շուկայում ստեղծված իրավիճակն է, մասնավորապես աշխատավարձերի մակարդակը եւ բաշխվածությունը, որով կարելի է հետեւել գների մակարդակին: ԿԲ նախագահը ընդգծեց նաեւ, որ կենտրոնական բանկը եւ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը չեզոք դիրքորոշում են հանդես բերել, այսինքն ինտերվենցիաներ եւ բյուջեի դեֆիցիտի արտարժութային ֆինանսավորում չեն կատարել, որոնք կարող էին անհավասարակշռություն մտցնել շուկայում:

Տես էջ 2

ԸՆԹԱՑԻԿ

Փնտրում են բարեկեցություն, գտնում...

90-ականների սկզբից բյուրավոր մեր հայրենակիցներ սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից դրդված բռնեցին արտագաղթի ուղին՝ բազմապատկելով հայկական սփյուռքը: Ի՞նչ է սպասվում օտարության մեջ: Այս հարցի պատասխանը շատ դեռ մեկնողները չգիտեն: Դոնարա Ալեքսանյանը եւս հայրենիքում ծանր պայմաններում էր ապրում եւ որոշեց օտար ափերում գտնել բարեկեցիկ կյանք եւ մեկնեց Գերմանիա: Սակայն բարեկեցիկ կյանքի պատկերացումները եւ իրականությունը, պարզվեց, տարբեր են: Տիկին Դոնարան անկեղծորեն պատմեց Համբուրգում իր անցկացրած օրերի մասին:

2000 թվականին Դոնարա Ալեքսանյանի դուստրը կանչեց նրան Գերմանիա: Աշխատանք չուներ Հայաստանում, իսկ Գերմանիայում աղջիկը երեխա էր ունեցել, մտածեց՝ կգնամ, կօգնեմ նրան, մի գործ էլ կգտնեմ, կաշխատենք, կապրենք: Դուստրը երբեւէ չէր մանրամասնել, թե ինչպես է ապրում, ինչ ճանապարհով են գումար վաստակում, միայն ասում էր, թե լավ են ապրում, դու էլ արի: Աղջկան օգնելու եւ Գերմանիայում աշխատանք գտնելու պատրանքով էլ կինը մեկնեց եվրոպական այս երկիր: Իրականությունն այլ էր, ոչ մի աշխատանք, ոչ մի վարձով տուն: Պետք էր հանձնվել Գերմանիայի իշխանություններին, սանձալ փախստականի կարգավիճակ: Այդպես էր արել նաեւ Դոնարայի դուստրը: Դոնարա Ալեքսանյանը դարձավ Դոնարա Սարգսյան: Պատմություն հորինեցին, իբր ապրել է Ադրբեջանում, ղարաբաղյան հակամարտության տարիներին փախել Ռուսաստան, այնտեղ փաստաթղթերը կորցրել է: Այս պատմությանը Գերմանիայի իշխանությունները հավատացին, նրան կացարան տրամադրեցին Համբուրգում՝ փախստականների ճամբարում, որտեղ ապրում էին հայեր, արաբներ, աֆղաններ, հնդիկներ եւ այլազգի փախստականներ:

Ամեն ամիս ստանում էր 150 եվրո, մի քանի ամիսը մեկ ստիպված էր լինում հորինած հիմնավորումները կրկնել: Հորինելով ապրեց 3,5 տարի: Կարող էր դեռ երկար ապրել: Տիկին Դոնարայի խոսքով՝ շատ հայեր փախստականների ճամբարում ապրում էին 10-15 տարի: Ոմանք ունեին աշխատելու իրավունք եւ թույլտվություն՝ ամեն օր ճամբարից 2 ժամով բացակայելու:

Իսկ ինչով են զբաղվում Համբուրգի փախստականների ճամբարում բնակվող մեր հայրենակիցները: Դոնարա Ալեքսանյանը վստահեցնում է, թե այն, ինչ պատմում են հայերը, Հայաստանում ապրող իրենց հարազատներին իրականությանը չի համապատասխանում. «Կանայք աշխատում են որպես աղախին, տղամարդիկ, եթե, իհարկե, հաջողվի, զբաղվում են մասնավոր այգիների մշակմամբ կամ ֆիզիկական ծանր աշխատանք են կատարում: Սակայն ամենաշահութաբերը զուգարան մաքրելն է»: Տիկին Դոնարայի խոսքով, այստեղ գործում է հայերի, ռուսաստանցի հրեաների մաֆիան: Եկամտաբեր այս աշխատանքում տեղավորվելն այդքան էլ դյուրին չէ:

Տկն Դոնարայի երկրորդ թոռնիկը եւս ծնվեց փախստականների ճամբարում: Որոշումը կայացված էր. պետք էր վերադառնալ Հայաստան: «Թեեւ մեզ լավ էին վերաբերվում, միեւնույն է, «երրորդ սորտի» մարդիկ էինք այնտեղ, որքա՞ն կարելի էր նման կյանքով ապրել»:

Արդեն մեկ ամիս Դոնարա Ալեքսանյանը հայրենիքում է: Աշխատանք չունի: Գործազուրկ են նաեւ նրա աղջիկը եւ փեսան, սակայն հույս ունեն, որ աշխատանք, այնուամենայնիվ, կգտնեն:

Ինչո՞ւ որոշեցին անկեղծանալ: Տկն Դոնարան ասում է, որ պատճառը իրականությունը տեղեկացնելն է, որ մեկնելուց առաջ հսկայական իմանան՝ ո՞ւր են գնում եւ ինչո՞ւ: Մեկնողներին ասվածն իբրեւ խորհուրդ կարող է ծառայել: Իսկ հայրենի իշխանություններից մի բան է խնդրում Դոնարա Ալեքսանյանը. ստեղծել պայմաններ, որ մարդիկ հայրենիքում մի կտոր հաց վաստակելու հնարավորություն ունենան:

Մ. Հ.

Ինչո՞ւ վաճառվեց կենտրոնական բանկի ոսկին...

Սկիզբը էջ 1

Սակայն Տիգրան Սարգսյանի մամուլի ասուլիսի հրավիրման նպատակը եվրոբանկի տարեկան ժողովի եւ Վաշինգտոնում կայացած «Գարնան հանդիպումներ» համաժողովի արդյունքների եւ այդ միջոցառումների ժամանակ Հայաստանին վերաբերող քննարկումների մասին տեղեկություններ հաղորդելն էր: Նշվեց, որ եվրոբանկը որոշում է ընդունել անցումային երկրներում առավել ակտիվ գործունեություն ծավալել եւ Հայաստանում գրասենյակ վերաբացել: Ըստ ԿԲ նախագահի, եվրոբանկը պատրաստ է ավելի մեծ ռիսկեր վերցնել իր վրա, որը կնպաստի մասնավոր հատվածում նոր ներդրումներին: Այս կազմակերպության ղեկավարների հետ Տիգրան Սարգսյանը քննարկել է երկու ծրագիր: Առաջինը փոքր եւ միջին հիդրոէլեկտրակայանների կառուցման համար ուսումնասիրություններ կատարելու ծրագիրն է: Եվրոբանկը պատրաստ է ՀԷԿ-երի կառուցման համար մինչեւ 100 մլն դոլարի ներդրումներ կատարել, որի առաջին փուլի համար նախատեսվող գումարը 30-40 մլն դոլար է:

Երկրորդը հիդրոբեկայի շուկայի զարգացման ծրագիրն եվրոբանկի մասնակցության հարցն էր: Այս կառույցն ունի անցումային երկրներում հիդրոբեկայի զարգացմանն աջակցելու փորձ: Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ ներկա պահին հիդրոբեկայի շուկայի զարգացման երեք տարբեր մոդելներ են քննարկվում երեք կառույցների հետ: Այստեղ առաջին խնդիրն օրենսդրական անհրաժեշտ դաշտ ստեղծելն է, երկրորդը՝ հիդրոբեկայի օպերատորի ստեղծումը: Վերջինս հնարավորություն կտա ունենալու երկարաժամկետ եւ ցածր տոկոսադրույքներով վարկեր:

Մամուլի ասուլիսի վերջում Տիգրան Սարգսյանն անդրադարձավ կենտրոնական բանկի կողմից ոսկու պաշարների վաճառքին: Նա նշեց, որ այդ գործարքին գնալու քայլը քննարկվել է ավելի քան մեկուկես տարի եւ ի վերջո որոշումն ընդունվել է երեք հիմնական պատճառներով:

Առաջին պատճառն այն է, որ ոսկու մեծ պաշարներ ունեցող երկրներն անգամ դրանք չեն հաշվառում համախառն արտաքին ակտիվներում: Երկրորդը, որ համախառն ներքին ակտիվները կրկնակի պակաս են արտաքին պարտքից եւ կազմում են մոտ 500 մլն դոլար: Այսինքն, ռիսկերի ադեկվատ խնդիր չունենք մինչեւ ակտիվները չգերազանցեն պարտքի չափը: Իսկ այդ պարտքը վճարելու ենք դոլարով եւ եվրոյով, այլ ոչ թե ոսկով: Երրորդը՝ Հայաստանն այն վիճակում չի գտնվում, որ զբաղվի հարստություն կուտակելով: Ոսկու դեպոզիտները տալիս են տարեկան 0,25 տոկոս եկամտաբերություն, իսկ անցյալ տարի դա դարձավ 0: Այս պատճառներով որոշվել էր մեր ոսկու պաշարները վաճառել, երբ միջազգային շուկայում ոսկու գինը հասնի 380 դոլարի: Ոսկին վաճառվեց, երբ այդ գինը դարձավ 400 դոլար, ինչի արդյունքում կենտրոնական բանկը ստացավ 3 մլրդ դրամից ավելի շահույթ, որը կուղղվի պետբյուջե:

Ընդդիմությունը 10-օրյա դադար վերցրեց

Սկիզբը էջ 1

Ողջ ընթացքում, 2 ժամ շարունակ անձրեւում էր, բայց մարդիկ, այնուամենայնիվ, չէին լքում հրապարակը: Իսկ բանախոսները կարծես թե նոր բան չէին հրամցնում նրանց: Չերբակալությունների դասապարտում, փակված ճանապարհներ, ծախված մամուլ, բարոյալքված ոստիկաններ, դավաճան պաշտոնյաներ:

Բանախոսների թվին այս անգամ ավելացել էին ՀԿԿ առաջին քարտուղար Ռուբեն Թովմասյանը, դերասան Երվանդ Մանարյանը, ՀԺԿ-ից՝ Ռուզան Խաչատրյանը: Ամբարիշտություն արտահայտելով իշխանությունների ու համերաշխություն՝ ընդդիմադիրների հետ, Ռուբեն Թովմասյանը նոր բանաձեւ ներկայացրեց՝ երկխոսությունը լինելու է ոչ թե կոալիցիայի եւ ընդդիմության, այլ իշխանության ու ժողովրդի միջեւ: Ռուզան Խաչատրյանի խոսքն ուղղված էր գլխավորապես վարչապետ Անդրանիկ Մարգարյանի դեմ: Նրա (եւ մյուս պատգամավորների եւս) գործունեությունը դավաճանական որակելով, Ռուզան Խաչատրյանը հայտարարեց, որ նա ցանկության դեպքում իսկ տեղ չի ունենալու ընդդիմադիրների կողքին:

Ինչպես միշտ, պատկերավոր արտահայտություններով առատ էր Արտաշես Գեղամյանի խոսքը: Նա ընդդիմությանն ու ժողովրդին մաղթեց գրաֆիտային համառություն, որ որքան բյուրեղանում, այնքան մոտենում է ադամանդի կարծրությանը, «ուրեմն՝ դեպի ադամանդված հաղթանակ»:

Հանրահավաքից հետո հայտարարվեց երբ՝ Մաշտոցի պողոտայով դեպի Մատենադարան, կորյունի փողոց, այնտեղից դեպի ոստիկանության շենք: Մասնակիցների մի մասը միայն ականջալուր եղավ երթի կոչին: Մարդկային ջլատված զանգվածն ուղղվեց դեպի գլխավոր պողոտա, մյուս՝ անկայուն հատվածը գնաց իր գործին: Այնուամենայնիվ, նույնիսկ այդ հանգամանքը նկատի առնելով, փիլ հետո երթի սկիզբը Մատենադարանի մոտ էր, վերջը՝ Մոսկովյան փողոցում: Արտաշես Գեղամյանի դիմանկարի փոխարեն մարդկանց ձեռքերին արդեն Սուրեն Սուրենյանցի, Արամազդ Զաքարյանի, Վաղարշակ Հարությունյանի դիմանկարներն էին: ԱԱ մեկուսարանի մոտ երթի մասնակիցները վանկարկումով պահանջեցին ազատ արձակել քաղբանտարկյալներին, դադարեցնել ձերբակալությունները: Հետո երթը կրկին վերադարձավ Ազատության հրապարակ: Հաջորդ հանրահավաքի որ հայտարարվեց մայիսի 14-ը, երեկոյան ժամը 18-ը:

Ի դեմ, երեկ լրացավ հանրահավաքային տարեգրության 1 ամիսը: Այդ ժամանակը բավարար չեղավ, որ հասարակությունը համակած լարվածությունը գտնի իր ճանապարհը: Հայաստանի քաղաքական ու սոցիալական իրականության մեջ սպասում ու անորոշություն է:

Միացեալ հայկական ֆոնդի 128-րդ թռիչքը $ 3,3 միլիոնի նպաստ ուղարկեց Հայաստան

Գլենդէյլ, Կալիֆոռնիա- Միացեալ հայկական ֆոնդի 128-րդ թռիչքը երեւան հասաւ մայիս 1-ին, փոխադրելով $3,3 միլիոն արժողութեամբ մարդասիրական օգնութիւն:

Այս թռիչքով Միացեալ հայկական ֆոնդը իր կողմէ տրամադրեց $ 2,9 միլիոն արժողութեամբ դեղորայք եւ բժշկական պիտոյքներ, որոնց մեծամասնութիւնը նուիրած էին Կաթողիկէ բժշկական առաքելութեան վարչութիւնը՝ $ 2,5 միլիոն արժողութեամբ, Health Partners կազմակերպութիւնը՝ $ 150,000, MAP International հիմնարկը՝ $ 108,000, եւ AmeriCares կազմակերպութիւնը՝ $ 103,000

Հեռեւեալ կազմակերպութիւններն ու անհատները եւս պորտանիներ նուիրելով մասնակցեցան այս թռիչքին- Իլինոյէն բժիշկ Սթիվըն Քաւեան՝ $ 57,000 արժողութեամբ, Կանադահայ բժշկական ընկերակցութիւնը՝ $ 52,000, Կալիֆոռնիայէն բժիշկ Վիգէն Կարապետեան՝ $ 52,000, Chene France կազմակերպութիւնը՝ $ 39,000, եւ Shoebox Sharing հիմնարկը՝ $ 31,000:

Թռիչքին մասնակցեցան նաեւ Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը՝ $ 17,000, Նիւ Ջըրզիէն Յարութ Շանթիկեան՝ $15,000, Հայաստանի ակնաբուժական ծրագիրը՝ $ 14,000, Զուիցերիայէն պրոֆ. Էռնսթ Լիման՝ $ 13,000, եւ Միացեալ Նահանգներու երկրագործական նախարարութիւնը՝ $ 12,000;

1989-էն ի վեր, Միացեալ Հայկական ֆոնդը 128 թռիչքներով եւ 1,043 ծովային արկղերով $ 383 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:

Միացեալ հայկական ֆոնդը համատեղ աշխատանքն է Ամերիկայի հայկական համագումարին, Հայ բարեգործական ընդհանուր միութեան, Ամերիկայի հայ առեւտրականաց ընկերակցութեան, Հայ օգնութեան միութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ Ամերիկայի առաջնորդարանին, Հայաստանեայց առաքելական Եկեղեցւոյ Ամերիկայի առաջնորդարանին եւ Լինսի հիմնարկին:

Իրադրությունը պահանջում է կենտրոնացնել ողջ հայության ուժերը

Սկիզբը էջ 1

Քննարկվել է համատեղ աշխատանքի արդյունավետության բարձրացման հարցը, ինչի համար կարեւորվել է տեղեկատվության ամենօրյա փոխանակումը:

Հանդիպման ընթացքում քննարկված հարցերի ու երկօրյա աշխատանքների արդյունավետության մասին մասնակիցների կարծիքները իմանալու նպատակով զրուցեցի ՌԱԿ համատենապետ Երվանդ Ազատյանի, Եվրամիության ՀՅՊ Հայ դատի գրասենյակի ղեկավար Հիլդա Չոբոյանի, կազմակերպության ղեկավար, Հոլանդիայի կազմակերպությունների միության ֆեդերացիայի նախագահ Մաքո Հախվերդյանի, ԼՊՀ արտգործնախարար Ատոմ Դուլյանի հետ:

Երվանդ Ազատյան-Այս հավաքը չափազանց օգտակար ու դրական եմ գնահատում նախ այն իմաստով, որ մասնակիցները հաճախ չեն խորհրդակցում ու գործակցում: Շատ հարցեր քննարկվեցին ու բյուրեղացան, դրանք առանձին մարդկանց մտքերում արդեն կարծես թե ինչեղություն ունեին, սակայն այստեղ տարբերությունները համադրվեցին ու տեղեկության պակասը լրացվեց: Իհարկե, քննարկվող հարցերը բոլորիս ծանոթ էին, սակայն դիվանագիտությունը դինամիկ ընթացք ունի, միշտ նորությունների ու անակնկալների մեջ է, հետեւաբար, ինչպես ամերիկացիներն են ասում՝ ամեն մարդ նույն էջի վրա պետք է լինի:

Վստահ եմ, որ բոլոր մասնակիցների համար օգտակար եղավ: Ուրախալի է, որ կազմակերպական աշխատանքները հետզհետե բարձր մակարդակի են հասնում:

Հիլդա Չոբոյան-Երկուսերեք պետք է ուշադիր լինենք Հայաստանի հզորացման, մեր շահերի պաշտպանման, նաեւ մեր ժողովրդի բարգավաճման ու խաղաղության, իրավունքների պաշտպանության խնդիրների հանդեպ: Առկա է աշխատանքների համադրում ու համագործակցություն զանազան մակարդակներում: Չպետք է մոռանալ, որ մենք նաեւ սփյուռքի ու եվրոպահայության շահերը պաշտպանելու հանձնառություն ունենք, ինչպես օրինակ, եվրոպահայ համայնքների լեզվամշակութային իրավունքների խնդիրը: Հայաստանի իշխանությունների ու զանազան կառույցների հետ այս իմաստով մշտական երկխոսության մեջ ենք:

Մեզ համար կարեւոր է Հայոց ցեղասպանության խնդրի մեջ այսօրվա Թուրքիայի պատասխանատվության հարցը, ամենամեծ պատասխանատվությունը ցեղասպանության ուրացման քաղաքականության մեջ է: Այս խնդիրները, թերեւս Հայաստանի իշխանությունները չեն կարող դնել, բայց մենք իրավասություն ունենք միջազգային իրավաբանների միջոցով հարցը հասցնելու միջազգային կառույցներին:

Մաքո Հախվերդյան-Բավականին հետաքրքրական էին հատկապես արտգործնախարարության ներկայացրած արտաքին քաղաքականության ուղղությունները: Հավատը մի քիչ հավասարակշռված չէր, որովհետեւ որոշ կազմակերպություններից շատ մարդիկ էին ներկա եւ ամբողջ ժամանակը իրենք զբաղեցրին, մեկի խոսքը 2 ժամ տեւեց, ուրիշներին շատ կարճ ժամանակ մնաց: Կարելի էր ավելի արդյունավետ կազմակերպել ու ավելի լավ արդյունքների հասնել: Մեր ուշադրության կենտրոնում եղան հատկապես Հայոց ցեղասպանության ճանաչմանը, Ղարաբաղի հիմնախնդրին ու Հայաստանի քաղաքական իրավիճակին առնչվող հարցերը: Աշխատում ենք Հոլանդիայում ազդեցություն գործել Հայոց ցեղասպանության, ինչպես նաեւ Հայաստանի սահմանների բացման հարցերը կոմպենսացիայի չափանիշների մեջ ընդգրկելու համար:

Ատոմ Դուլյան-Քննարկվող հարցերից մեկը ղարաբաղյան հիմնախնդիրն էր, որի նկատմամբ նկատելի հետաքրքրություն կար: Մեր արտաքին քաղաքականության գերակա ուղղություններն, ըստ իս, հնարավոր չէ առանձին ներկայացնել: Դրանք պետք է լինեն լավ համադրված, խոսք լինել չի կարող մեկը մյուսից առանձնացնելու մասին: Մասնակիցները հնարավորություն ունեցան արտահայտելու իրենց տեսակետները ղարաբաղյան հիմնախնդրի, սպասվող հնարավոր զարգացումների ու հետագա համագործակցության մասին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 69 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Թաղ. 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենեակ
/ հեռ. 581841
Հաճախորդ ծառայութիւն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրամադիր մամուլի միջոցով կամ օտարիոնաստեղծութեամբ, ա ասնց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Կոռուպցիայի դեմ կպայքարի նաեւ ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան բաժինը

Հայաստանում այսուհետեւ կոռուպցիայի դեմ պայքարի գործին կլծվի եւս մի պետական կառույց: ՀՀ գլխավոր դատախազության կոլեգիայի նիստում գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի առաջարկով ստեղծվել է դատախազության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի բաժին ստեղծելու անհրաժեշտությունը, եւ մարտի 30-ին Հովսեփյանի հրամանով ստեղծվել է այդ բաժինը: Բաժնում աշխատելու են 4 դատախազ, դատախազությունում արդեն իսկ սահմանված աշխատավարձով 1 տեսուչ-օպերատոր, փաստաթղթերի գաղտնիությունն ապահովելու նպատակով դատախազին առընթեր հատուկ գործերի բաժնի 2-3 ենթակա: Բնականաբար, բաժինն ունի նաեւ աշխատանքները կազմակերպող ու ղեկավարող պետ: Այդ պաշտոնում նշանակվել է, գլխավոր դատախազի հավաստմամբ, անհրաժեշտ մասնագիտական փորձ, աշխատանքային հարուստ կենսագրություն ունեցող Միհրան Մինասյանը: Վերջինիս եւ գլխավոր դատախազի հավաստմամբ, բաժինն աշխատելու է հանցագործությունը կանխարգելելուց մինչեւ մեղադրանք հարուցելու փուլ եւ բոլոր այն ոլորտներում, որտեղ առկա է պետական գույքային շահ:

Աղվան Հովսեփյանի հավաստմամբ, բաժնի աշխատանքը ծավալվելու է նաեւ դատաիրավական ոլորտում եւ հենց դատախազության համակարգում: «Ես միամիտ չեմ, որ ժխտեմ մեր համակարգում կոռուպցիայի առկայությունը», այս նախադասությամբ գլխավոր դատախազն ընդգծեց իր հաստատակամությունը: Եվ բաժնի ստեղծումը ներկայացրեց նաեւ որպես քաղաքական կամքի դրսեւորում: Կոռուպցիայի դեմ պայքարի այս նոր կառույցն առաջին հերթին համագործակցելու է ՀՀ նախագահի վերահսկողության ծառայության հետ, գործելու է թույլատրելի հրապարակայնությամբ, աշխատանքի հիմնական մեթոդները լինելու են վերլուծությունն ու ուսումնասիրությունը: Բացի այդ, բաժինը պետք է լուծի նաեւ առկա նեղ մասնագիտացման խնդիրը եւ բերի օրենսդրական լուրջ փոփոխությունների քրեական օրենսգրքի համոզմամբ, առանձին ոլորտներում դատախազության եւ հատկապես նորաստեղծ բաժնի լիազորությունները համազոր չեն լուծելիք խնդիրներին: Չնայած դրան, արդեն կան ընթացող գործեր եւ կատարվում են համապատասխան ուսումնասիրություններ, ու մոտակա կարճ ժամանակաընթացքում կոռուպցիա որակված գործերը կփոխանցվեն դատախազության նորաստեղծ բաժին, նաեւ կկազմվի ու կհաստատվի բաժնի կանոնակարգը: Իսկ կոռուպցիայի ծավալների չկրճատման պատճառներին խորհուրդ տրվեց ամենայն մանրամասնությամբ տեղեկանալ կոռուպցիայի դեմ պայքարի պետական ծրագրից:

Կոռուպցիայի դեմ պայքարի բաժին ստեղծելու կապակցությամբ լրագրողների հետ հանդիպման ընթացքում Աղվան Հովսեփյանը պատասխանեց նաեւ օրվա թեմային չառնչվող մի քանի հարցերի: Նա հավատացրեց, որ ՀՀ որեւէ քաղաքացի հանրահավաքներին, երթերին մասնակցելու համար վարչական կալանքի չի ենթարկվել, կալանվել են միայն զգաստությունների եւ հասարակական կարգի խախտման համար: Գլխավոր դատախազը նաեւ փաստեց, որ թե նախագահական, թե խորհրդարանական ընտրություններից հետո բազում քրեական գործեր են հարուցվել հասարակական կարգի խախտման, մարմնական վնասվածքներ հասցնելու եւ ընտրակեղծիքներ իրականացնելու մեղադրանքներով, որոնց առնչվող փաստաթղթերը ուղարկվել են նաեւ Եվրախորհուրդ եւ դրանց մասին ցանկացած տեղեկություն հնարավոր է ստանալ դատախազությունից:

ՆԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հերքում

Ապրիլի 28-ին «Ազգ»-ը «Ուշադրությունը կենտրոնանում է «Կենտրոն» հեռուստաընկերության վրա» վերնագրով տպագրել էր տեղեկատվություն, որտեղ ակնարկություն կար այն մասին, թե «Կենտրոն» հեռուստաընկերության նոր սեփականատեր Մուրադ Գուլոյանը սեփականատերն է նաեւ Շիրակի մարզի Բայանդուրի թռչնաֆաբրիկայի, որը ժամանակին վարչապետ Հրանտ Բագրատյանը «ջրի գնով սեփականաշնորհել էր» իր եղբորը: Այս կապակցությամբ ապրիլի 29-ին մեր թերթը հերքման պահանջով հակիրճ նամակ էր ստացել Հ. Բագրատյանի «Ազատություն» կուսակցության լրատվական ծառայությունից, որը չտպագրվեց, քանզի պակասում էր նման դեպքերում անհրաժեշտ լուսաբանումը: Մայիսի 3-ին միեւնույն ծառայությունից ստացանք հետեւյալ բացատրությունը, որը հրապարակում ենք նույնությամբ:

«Ազգ» օրաթերթի խմբագրությանը

Ի լրացումն 29.04.04 թ. Ձեզ ուղարկված հերքման տեքստի, բացատրում ենք, որ Ձեր թերթի հիշատակված հոդվածում տպագրված տվյալները չեն համապատասխանում իրականությանը, որովհետեւ, նախ՝ իր եղբորը Հրանտ Բագրատյանը երբեւիցէ որեւէ ձեռնարկություն չի սեփականաշնորհել: Եղբայրը տվյալ ձեռնարկությունում՝ հոդվածում նշված Բայանդուրի թռչնաֆաբրիկայում («Իրամեն» Բաց ԲԸ) աշխատանքի է անցել 2001 թ.-ից, որպես գյուղատնտեսական արտադրության ոլորտում բարձրակարգ մենեջեր, ապա, մեկ տարի անց տեղափոխվել է այլ հիմնարկություն՝ ավելի բարձր վարձատրվող աշխատանքի: Բնականաբար, կապ չէր կարող ունենալ 1993-96 թթ. պաշտոնավարած վարչապետ Հրանտ Բագրատյանի հետ: Խմբագրության համար դժվար չէ պարզել նաեւ, թե ովքեր են 1996-97 թթ.-ին սեփականաշնորհել ձեռնարկությունը, եւ ումից են այն գնել պարսիկները: Այստեղ Բագրատյան ազգանունը որեւէ կապ ունենալ չի կարող:

Մենք սիրված ենք պնդել անպայման հերքումը տպագրելու, որովհետեւ նման թյուրիմացությունները հիմք են ծառայում հետագա վարկաբեկիչ բամբասանքների շղթայի տարածման համար: Դրա առաջն առնելը, մեզ թվում է, Ձեր իրավական եւ բարոյական պարտականությունն է:

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Անալգինը կողմնակի ազդեցություններ ունի

Տեղեկացնում է առողջապահության նախարարության «Դեղագործակալություն» ՓԲԸ դեղագործական հիմնարկների փորձագիտական բաժնի վարիչ Գագիկ Գրիգորյանը: Վաղուց արդեն զարգացած արտասահմանը չի կիրառում այս դեղը: Բուժման ավելի նախընտրելի դեղամիջոցներ են ազդեցության ավելի անվտանգ մեխանիզմով պենտալգինը, սեդալգինը, կոֆետինը, պարացետամոլի տարբեր տեսակները, որոնք եւ ջերմիջեցնող, եւ ցավազրկող ազդեցություն ունեն: Անալգինը կողմնակի ազդեցություններ է ունենում հատկապես երիկամների վրա՝ նեֆրոտոքսիկ ազդեցություն, իսկ մարդիկ հաճախ են առանց բժշկի թույլտվության անալգին օգտագործում: Մասնագետի դիտարկմամբ, պատճառը ինֆորմացիայի բացակայությունն է, անհրաժեշտությունը ոչ միայն հիվանդների, այլեւ բժիշկների շրջանում:

Կ. Դ.

Խեղաթյուրվել է կամավորի կարգավիճակը

Վանաձորում գործող «Մեդիա գրուպ» լրատվական-հասարակական կազմակերպության կամավորները ՀՀ սոցիալական ապահովագրական պետական հիմնադրամի (ՍԱՊՀ) ակտում որակվել են վարձու աշխատողներ: Դրա հետեւանքով էլ ԼՀԿ-ի նկատմամբ հաշվարկվել է 652 հազար դրամ սոց. վճար եւ 150 հազար դրամ վարչական տույժ: ՀՀ տնտեսական դատարանը անհիմն եւ անօրինական է ճանաչել ՍԱՊՀ-ի Վանաձորի տարածքային կենտրոնի պահանջը, սակայն վճռաբեկ դատարանը բավարարել է կենտրոնի բողոքը եւ գործն ուղարկել նոր քննության՝ նույն ՀՀ տնտեսական դատարան, որտեղ էլ այսօր 14.30-ին տեղի կունենա «Մեդիա գրուպ» ԼՀԿ-ն ընդդեմ սոցիալական ապահովության պետական հիմնադրամի քաղաքացիական գործով երկրորդ դատական նիստը:

Ն. Պ.

Ընտրախաղը որպես արդար ընտրությունների մոդել

Հայաստանում ազատ, արդար եւ թափանցիկ ընտրություններ անցկացնելու համար նպատակավոր հող նախապատրաստելու նպատակով «Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպությունը հանրապետության դպրոցներում ընտրախաղեր է կազմակերպում: Մինչ օրս կազմակերպությունը հարյուրավոր ընտրախաղեր է անցկացրել: Կազմակերպության տարածած հայտարարության համաձայն՝ վաղը կայանալիք համաժողովի ընթացքում կամփոփվեն դրանց արդյունքները, կնախանշվեն այդ ոլորտում կազմակերպության գործունեության հետագա ուղիները:

Ռ. Մ.

«Գրանդ հոլդինգի» կազմակերպած տոնախմբությունը

Արդեն ավանդույթ է դարձել ամեն տարի մայիսի 1-ը նշել ժողովրդական մեծ տոնախմբությամբ: Ավելի ճիշտ՝ յուրովի վերականգնել նախկին աշխատավորական տոնը, այն մարել նախկին՝ սոցիալիստական կեղտոտոցից եւ վերադարձնել նրան սկզբնական անխառն նշանակությունը՝ աշխատանքի եւ աշխատող մարդու փառաբանում: Եվ այս ավանդույթի վերստեղծողը Հրանտ Վարդանյանն է՝ «Գրանդ հոլդինգի» նախագահը, քանի որ հավատում է աշխատանքի անփոխարինելիությանը գործնականորեն՝ գործ ստեղծելով, աշխատանք հայթայթելով ավելի քան 35 հազար իր հայրենակիցներին:

Այնուհետեւ, հայրենիքն աշխատանքով շենացնելու, մեր բազում հարցերն աշխատանքով լուծելու, Հ. Վարդանյանի ու նրա կատարած կարեւոր գործի մասին ելույթներ ունեցան տարբեր հրավիրյալներ, որոնց շարքում՝ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը:

Հաջորդեց տոնական համերգը, Հայաստանի լավագույն կատարողների, երաժիշտների ու պարախմբերի մասնակցությամբ: Ողջ դահլիճը ոգեւորված էր, մարդիկ լսում էին վաղուց չլսված երգեր, կատարումներ, ոգեւորությամբ դիտում ազգային մեր պարերը:

Այս անգամ տոնախմբությունը կազմակերպված էր «Կարեն Դեմիրճյան» մարզահամերգային մեծ դահլիճում, որտեղ քափուր տեղ չկար: Հավաքված էին «Գրանդ հոլդինգի» 3 ձեռնարկությունների՝ «Գրանդ ֆենդիի», «Գրանդ սանի» եւ «Մասիս տոբակոյի» աշխատակիցներ, աշխատանքի հերոսներ, վետերաններ, հյուրեր: Ներկաներին հակիրճ խոսքով ողջունեց Հրանտ Վարդանյանը եւ հայտնեց, որ մայիսի 1-ը դառնալու է հաշվետվության օր: Եվ, իրոք, ինքն էլ հակիրճ հաշվետվություն ներկայացրեց ու նշեց միավորված 3 ձեռնարկությունների մեկ տարվա աշխատանքի արդյունքը:

Ոգեւորությունը գագաթնակետին հասավ, երբ հայտարարվեց պարգեւների մասին: «Վոլգա» ավտոմոբիլն նվիրվեց լավագույն ծխախոտագործ Վարդան Մարտիրոսյանին, 3 սենյականոց բնակարան՝ ամենաերիտասարդ լավագույն աշխատավորուհի Մարինե Մանարյանին, իսկ բազմաթիվ ուրիշների՝ ոսկյա ժամացույցներ, երաժշտական կենտրոններ, տարբեր պարգեւներ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագիրը եւ դրա հնարավոր հետեւանքները մեր տարածաշրջանի երկրների համար

ՎԱՀԱՆ ՉԱԼԲՅԱՆ

«Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագիրը «աշխարհին ուղղություն տալու» ԱՄՆ-ի ռազմական դոկտրինային համապատասխան դեռեւս 90-ական թթ. սկզբներին առաջ է քաշել ՌԱՆԴ կորպորացիան: Դա նախատեսում է Մերձավոր Արեւելքի հենքի վրա աշխարհաքաղաքական նոր մակրոտարածաշրջանի ստեղծումը: Դրա նախնական տարբերակով այս մակրոտարածաշրջանի մեջ էին ընդգրկվում Միջին Ասիան՝ 5 հանրապետություններով, նեռայալ Ղազախստանը, Անդրկովկասը, Մերձավոր Արեւելքի արաբական երկրները եւ Իսրայելը, ինչպես նաեւ Իրանն ու Թուրքիան:

Սեպտեմբերի 11-ից հետո միջազգային ահաբեկչության դեմ պայքարի պատրվակով ԱՄՆ-ը պատերազմ սանձազերծեց նախ Աֆղանստանի, ապա եւ Իրաքի դեմ: Այդ պատերազմները հանգեցրին Աֆղանստանի եւ Իրաքի օկուպացման: Միաժամանակ ԱՄՆ-ը՝ հանձինս Տաջիկստանի, Ուզբեկստանի եւ Ղրղզստանի՝ Միջին Ասիայում, իսկ Վրաստանի՝ Անդրկովկասում ռազմական ներկայություն ապահովեց:

Աֆղանստանի եւ Իրաքի օկուպացումն ու ամերիկյան ռազմական ներկայության ապահովումը ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Միջին Ասիայում, նպաստեցին «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրի իրագործման նախադրյալների ստեղծմանը: Այս պայմաններում ԱՄՆ-ը վերանայեց ծրագիրը: Այսպիսով, դրանում Մերձավոր եւ Միջին Արեւելքի, Անդրկովկասի, Միջին Ասիայի երկրների կողքին ընդգրկվեցին նաեւ Աֆղանստանը, Պակիստանը, Կիպրոսն ու Հյուսիսային Աֆրիկայի երկրները՝ նեռայալ Մարոկկոն: Այլ կերպ՝ ծրագրի աշխարհագրությունը զգալի ընդլայնվեց: Ընդլայնված տարբերակն էլ դրվեց քննարկության մեջ:

«Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրի մասին հունվարի վերջերին Դավոսում հրապարակավ առաջինն արտահայտվեց ԱՄՆ փոխնախագահ Դիք Չեյնին, որտեղ նա մասնակցում էր Համաշխարհային տնտեսական ֆորումի աշխատանքներին: Փետրվարին ծրագիրը հայտնվեց ամերիկյան մամուլի ուշադրության կենտրոնում, իսկ մարտի սկզբներին դրա շուրջ կարծիքներ փոխանակելու առաջադրանքով Եվրոպա գործուղվեց ԱՄՆ փոխպետքարտուղար Մարկ Գրոսմանը: Այնուհետեւ նա անցավ Մարոկկո, որտեղից էլ ուղեւորվեց տարածաշրջան՝ այցելելով Եգիպտոս եւ այլ երկրներ:

Թեեւ Փարիզն ու Բեռլինը լրջորեն հակադրվեցին ծրագրին, իսկ Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան դա կտրականապես մերժեցին, բայց եւ այնպես Գրոսմանի շրջագայությամբ ծրագիրը մտավ միջազգային հանրության օրակարգ: Դա դեռեւս չի հրապարակվել: Հետեւաբար մանրամասները հայտնի չեն: Պարզապես գիտենք, որ Վաշինգտոնը Իսրայելից եւ Անգլիայից բացի որեւէ այլ երկրի ծրագրի մշակման մասնակիցը չի դարձել: Իսկ դրա իրագործումը պայմանավորել է Ռուսաստանի հնարավոր ծավալումն ու Չինաստանի հետագա հզորացումը կասեցնելու, ինչպես նաեւ իսլամական արմատական կազմակերպություններին վնասազերծելու միջոցով տարածաշրջանում Արեւմուտքի շահերը սպառնալիքներից պաշտպանելու անհրաժեշտությամբ:

Սպառնալիքների թվում Վաշինգտոնը նշել է ահաբեկչությունն ու զանգվածային ոչնչացման զենքերի առկայությունը տարածաշրջանում եւ ծրագրի առաջնահերթ նպատակներից է համարել տարածաշրջանային երկրների բարգավաճումն ու այդ երկրներում ժողովրդավարության ամրապնդումը:

Ծրագիրը քննարկման է դրվելու «Մեծ ութնյակի», ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության առաջիկա գագաթաժողովներում, որոնց հրավիրումը նախատեսվում է ամռանը: Քննարկումներն, ինչ խոսք, կիստակեցնեն դրա նկատմամբ առկա դիրքորոշումները: Սակայն, անկախ դրանց արդյունքներից, ակնհայտ է, որ ծրագիրը հակառուսական եւ հակաչինական ուղղվածությունից բացի ունի նաեւ հակաեվրոպական ուղղվածություն:

Ինչ վերաբերում է Մերձավոր ու Միջին Արեւելքի բարգավաճմանն ու ժողովրդավարացմանը, ապա դա ենթադրում է տնտեսական եւ քաղաքական աջակցություն, ինչն իր հերթին անհրաժեշտ է դարձնում տարածաշրջանում կայունության ամրապնդումը: Մինչդեռ ԱՄՆ-ը տարածաշրջանի վերակազմավորման առաջադրանքով այստեղ պատերազմներ է սանձազերծում, հրահրում է միջէթնիկ եւ միջդավանանքային բախումներ: Այս ամենի հետեւանքով տարածաշրջանային երկրներում ծավալվում է ահաբեկչությունը, իսկ բռնությունը՝ սասկանում: Ուրեմն, ծրագիրն ուղղված պետք է լինի նաեւ տարածաշրջանային երկրների դեմ:

Հակառուսական եւ հակաչինական ուղղվածության պարագայում ԱՄՆ-ի խնդիրը ոչ այնքան Ռուսաստանի ծավալումն է կամ Չինաստանի հզորացումը, որքան ռուս-չինական առանցքի ամրապնդումն ու դրանում Իրանի ներգրավումը:

Ծրագրի հակաեվրոպական ուղղվածության հիմքում, ըստ ամենայնի, «Միջերկրածովի» նախաձեռնությունն է, որը նախատեսում է ԵՄ-ի գլխավորությամբ Միջերկրականի ավազանում առափնյա երկրների համագործակցության ձեւավորումը: Կասկածից վեր է, որ ձեւավորման դեպքում այս համագործակցությունն ի հակակշիռ ԱՄՆ-ի միանձնյա ռազմական ներկայության Մերձավոր եւ Միջին Արեւելքում, ոչ միայն կխոչընդոտի տարածաշրջանում ամերիկյան ծրագրերի իրագործմանը, այլեւ կնպաստի ԵՄ-ի որպես ինքնուրույն բեւեռ ձեւավորմանը:

Ուրեմն ԱՄՆ-ը «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրում Հյուսիսային Աֆրիկայի երկրներին ընդգրկում է «Միջերկրածովի» եվրոպական նախաձեռնությունը ձախողելու նպատակով: Ի պատասխան դրան, ԵՄ-ն ամերիկյան ծրագրին է հակադրում ֆրանս-գերմանական համատեղ նախաձեռնության արդյունքը հանդիսացող «Ընդարձակ Մերձավոր Արեւելք» անունով մեկ այլ ծրագիր: Այսպիսով, անխուսափելի է դառնում «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրի եւ դրա եվրոպական այլընտրանքային տարբերակի շուրջ ԵՄ-ԱՄՆ մրցապայքարի ծավալումը:

Ինչ վերաբերում է տարածաշրջանային երկրներին, ապա պետք է ասել, որ տարածաշրջանի վերակազմավորումն, ըստ ծրագրի, պայմանավորվում է նրանց վերակազմավորմամբ: Քանի որ դա, բացառությամբ Իսրայելի, վերաբերում է բոլորին, գործող վարչակարգերի տապալման անխուսափելի հետեւանքով, ուստի ծրագրին բուռն հակազդեցություն են ցուցաբերում նաեւ այն երկրները, որոնք տարածաշրջանում ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակիցներն են: Սա նշանակում է, որ Մերձավոր եւ Միջին Արեւելքի վերակազմավորման պարագայում խնդիրը սոսկ տարածաշրջանի «վերածեւումը» չէ, այլ ամերիկյան քաղաքականության մեջ «ռազմավարական դաշնակից» հասկացության վերանայումը:

Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ ԱՄՆ-ը տարածաշրջանի վերակազմավորմանը զուգընթաց տարածաշրջանային երկրներին ենթարկում է ռազմավարական վերախմբավորման, ինչն իր հերթին անհրաժեշտ է դարձնում նրանց նոր տեղի եւ դերի հաստատումը: Ինչպիսին կլինի այդ տեղն ու դերը, դժվար է ասել: Բայց որ տարածաշրջանն Իրաքի օրինակով է վերակազմավորվում, իսկ Իրանը վերակազմավորման ճողի տակ, փաստորեն, կանգնել է կազմալուծման սպառնալիքի առջեւ, ակնհայտ է:

Խոսքը տվյալ դեպքում Իրաքի քրդերին արաբ մեծամասնությանը հակադրելու կամ երկրում շիա-սունիական բախումներ հրահրելու ԱՄՆ-ի նկրտումների մասին չէ, այլ «ժամանակավոր սահմանադրության», որը մարտի 8-ին ստորագրել են ամերիկյան վարչակազմի ղեկավար Փոլ Բրեմերն ու Իրաքի կառավարող խորհրդի բոլոր 25 անդամները: Սահմանադրությամբ Իրաքը դառնում է դաշնային հանրապետություն: Քանի որ դաշնության սուբյեկտներն են Հյուսիսային Իրաքը՝ քուրդ բնակչությամբ, Կենտրոնական Իրաքը՝ սունի, իսկ Հարավայինը՝ շիա արաբներով, իսկ սահմանադրությունը ինչպես քրդերին, այնպես էլ սուննիներին եւ շիաներին օժտում է ինքնիշխանության հատկանիշներով, ուստի երկիրը ոչ միայն էթնիկ եւ դավանանքային հիմունքներով բաժանվում է երեք մասի, այլեւ կանգնում է մասնատման սպառնալիքի առջեւ:

Քուրդ-արաբական բախումներին զուգընթաց նոր պատժամիջոցների կիրառման պատրաստականությամբ Վաշինգտոնն աննախադեպ ուժեղացրել է Սիրիայի վրա գործադրվող ճնշումները: Դրանք պայմանավորվում են այսպիսի պահանջներով, դադարեցնել աջակցությունը պաղեստինյան արմատական կազմակերպություններին, Իսրայելի հետ անհապաղ նստել բանակցությունների շուրջ, հանձնել Սիրիա փախած Սադդամի վարչակարգի անդամներին:

Այս պահանջներից պետք է առանձնացնել Լիբանանի տարածից սիրիական ստորաբաժանումները դուրս բերելու եւ այդ երկրի ներքին գործերին Սիրիայի միջամտությանը վերջ տալու պահանջը: Այն առումով, որ ԱՄՆ-ի պահանջները թեկուզ մասամբ կատարելով Սիրիան ստիպված է լինելու տարածաշրջանում կորցնել իր քաղաքական կշիռն ու ազդեցությունը: Դա իր հերթին լուրջ հարված է հասցնելու արաբական միասնականության գաղափարին: Իսկ Լիբանանից սիրիական ստորաբաժանումները դուրս բերելու դեպքում այս երկիրն անպատշաճ է մնալու Իսրայելի ոտնձգություններից: Հատկապես այն դեպքում, երբ Արիել Շարոնի կառավարությունը ջեյխ Ահմեդ Յասինի սպանությունից հետո «Համասի» եւ «Իսլամական ջիհադի» կողքին պատերազմ է հայտարարել Լիբանանի հարավում տեղակայված «Հզբոլլահին»:

Հարավային Լիբանանի նկատմամբ Իսրայելի ագրեսիվ նկրտումները հայտնի են: Միաժամանակ Լիբանանը խայտաբղետ ազգաբնակչությամբ ունի ինչպես միջէթնիկ, այնպես էլ միջդավանանքային բախումների հրահրման բոլոր նախապայմանները: Այս ամենը խոցելի է դարձնում Լիբանանին, ընդ որում՝ ոչ միայն Իսրայելի, նաեւ ԱՄՆ-ի համար: Կասկածից վեր է, որ Լիբանանի խոցելիության աստիճանը պայմանավորելու է ԱՄՆ-ի ճնշումներին դիմակայելու Սիրիայի կարողությունները: Այլ կերպ, «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրում Լիբանանի տեղն ու դերը պայմանավորված է ԱՄՆ-Սիրիա հարաբերություններով: Հատկանշական է, որ Հայաստանի պարագայում էլ այդ տեղի ու դերի առումով կարեւոր նշանակություն են ձեռք բերում ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները:

«Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրի հակառուսական ուղղվածությունը հայ-ռուսական ռազմական եւ ռազմավարական համագործակցության պայմաններում, ինչ խոսք, խոցելի է դարձնում նաեւ Հայաստանը: Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը եւ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը էլ ավելի է բարդացնում նրա վիճակը: Այլ կերպ, ռուս-ամերիկյան մրցապայքարի մեջ ներքաշված Հայաստանը նշանառության թիրախ է դառնում ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ Թուրքիայի համար: Հարկ է սակայն նշել, որ վերջին տարիներին եւ հատկապես Վրաստանում ռազմական ներկայություն ապահովելուց հետո ԱՄՆ-ն Անդրկովկասում ինքնուրույն է գործում: Այլեւս նրա գործունեությունն, ինչպես նախկինում էր, Թուրքիայով միջնորդավորված չէ:

Միաժամանակ ակնհայտ է, որ Անդրկովկասն ու Միջին Ասիան «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրում ընդգրկող ԱՄՆ-ը չի կարող հանդուրժել Ադրբեջանի եւ միջինասիական թուրքալեզու հանրապետությունների մասնակցությամբ տնտեսական, քաղաքական, մշակութային որեւէ համագործակցության ստեղծումը Թուրքիայի գլխավորությամբ: Սա նշանակում է, որ Հայաստանը որպես գործոն, բացի Ռուսաստանից, անհրաժեշտ է նաեւ ԱՄՆ-ին: Եթե Անդրկովկասում Ռուսաստանի՝ Միջին Ասիայում, իսկ Վրաստանի՝ Անդրկովկասում ռազմական ներկայություն ապահովվեց:

Աֆղանստանի եւ Իրաքի օկուպացումն ու ամերիկյան ռազմական ներկայության ապահովումը ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Միջին Ասիայում, նպաստեցին «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրի իրագործման նախադրյալների ստեղծմանը: Այս պայմաններում ԱՄՆ-ը վերանայեց ծրագիրը: Այսպիսով, դրանում Մերձավոր եւ Միջին Արեւելքի, Անդրկովկասի, Միջին Ասիայի երկրների կողքին ընդգրկվեցին նաեւ Աֆղանստանը, Պակիստանը, Կիպրոսն ու Հյուսիսային Աֆրիկայի երկրները՝ նեռայալ Մարոկկոն: Այլ կերպ՝ ծրագրի աշխարհագրությունը զգալի ընդլայնվեց: Ընդլայնված տարբերակն էլ դրվեց քննարկության մեջ:

«Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրի մասին հունվարի վերջերին Դավոսում հրապարակավ առաջինն արտահայտվեց ԱՄՆ փոխնախագահ Դիք Չեյնին, որտեղ նա մասնակցում էր Համաշխարհային տնտեսական ֆորումի աշխատանքներին: Փետրվարին ծրագիրը հայտնվեց ամերիկյան մամուլի ուշադրության կենտրոնում, իսկ մարտի սկզբներին դրա շուրջ կարծիքներ փոխանակելու առաջադրանքով Եվրոպա գործուղվեց ԱՄՆ փոխպետքարտուղար Մարկ Գրոսմանը: Այնուհետեւ նա անցավ Մարոկկո, որտեղից էլ ուղեւորվեց տարածաշրջան՝ այցելելով Եգիպտոս եւ այլ երկրներ:

Թեեւ Փարիզն ու Բեռլինը լրջորեն հակադրվեցին ծրագրին, իսկ Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան դա կտրականապես մերժեցին, բայց եւ այնպես Գրոսմանի շրջագայությամբ ծրագիրը մտավ միջազգային հանրության օրակարգ: Դա դեռեւս չի հրապարակվել: Հետեւաբար մանրամասները հայտնի չեն: Պարզապես գիտենք, որ Վաշինգտոնը Իսրայելից եւ Անգլիայից բացի որեւէ այլ երկրի ծրագրի մշակման մասնակիցը չի դարձել: Իսկ դրա իրագործումը պայմանավորել է Ռուսաստանի հնարավոր ծավալումն ու Չինաստանի հետագա հզորացումը կասեցնելու, ինչպես նաեւ իսլամական արմատական կազմակերպություններին վնասազերծելու միջոցով տարածաշրջանում Արեւմուտքի շահերը սպառնալիքներից պաշտպանելու անհրաժեշտությամբ:

Սպառնալիքների թվում Վաշինգտոնը նշել է ահաբեկչությունն ու զանգվածային ոչնչացման զենքերի առկայությունը տարածաշրջանում եւ ծրագրի առաջնահերթ նպատակներից է համարել տարածաշրջանային երկրների բարգավաճումն ու այդ երկրներում ժողովրդավարության ամրապնդումը:

Ծրագիրը քննարկման է դրվելու «Մեծ ութնյակի», ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության առաջիկա գագաթաժողովներում, որոնց հրավիրումը նախատեսվում է ամռանը: Քննարկումներն, ինչ խոսք, կիստակեցնեն դրա նկատմամբ առկա դիրքորոշումները: Սակայն, անկախ դրանց արդյունքներից, ակնհայտ է, որ ծրագիրը հակառուսական եւ հակաչինական ուղղվածությունից բացի ունի նաեւ հակաեվրոպական ուղղվածություն:

Ինչ վերաբերում է Մերձավոր ու Միջին Արեւելքի բարգավաճմանն ու ժողովրդավարացմանը, ապա դա ենթադրում է տնտեսական եւ քաղաքական աջակցություն, ինչն իր հերթին անհրաժեշտ է դարձնում տարածաշրջանում կայունության ամրապնդումը: Մինչդեռ ԱՄՆ-ը տարածաշրջանի վերակազմավորման առաջադրանքով այստեղ պատերազմներ է սանձազերծում, հրահրում է միջէթնիկ եւ միջդավանանքային բախումներ: Այս ամենի հետեւանքով տարածաշրջանային երկրներում ծավալվում է ահաբեկչությունը, իսկ բռնությունը՝ սասկանում: Ուրեմն, ծրագիրն ուղղված պետք է լինի նաեւ տարածաշրջանային երկրների դեմ:

Հակառուսական եւ հակաչինական ուղղվածության պարագայում ԱՄՆ-ի խնդիրը ոչ այնքան Ռուսաստանի ծավալումն է կամ Չինաստանի հզորացումը, որքան ռուս-չինական առանցքի ամրապնդումն ու դրանում Իրանի ներգրավումը:

Ծրագրի հակաեվրոպական ուղղվածության հիմքում, ըստ ամենայնի, «Միջերկրածովի» նախաձեռնությունն է, որը նախատեսում է ԵՄ-ի գլխավորությամբ Միջերկրականի ավազանում առափնյա երկրների համագործակցության ձեւավորումը: Կասկածից վեր է, որ ձեւավորման դեպքում այս համագործակցությունն ի հակակշիռ ԱՄՆ-ի միանձնյա ռազմական ներկայության Մերձավոր եւ Միջին Արեւելքում, ոչ միայն կխոչընդոտի տարածաշրջանում ամերիկյան ծրագրերի իրագործմանը, այլեւ կնպաստի ԵՄ-ի որպես ինքնուրույն բեւեռ ձեւավորմանը:

Ուրեմն ԱՄՆ-ը «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրում Հյուսիսային Աֆրիկայի երկրներին ընդգրկում է «Միջերկրածովի» եվրոպական նախաձեռնությունը ձախողելու նպատակով: Ի պատասխան դրան, ԵՄ-ն ամերիկյան ծրագրին է հակադրում ֆրանս-գերմանական համատեղ նախաձեռնության արդյունքը հանդիսացող «Ընդարձակ Մերձավոր Արեւելք» անունով մեկ այլ ծրագիր: Այսպիսով, անխուսափելի է դառնում «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրի եւ դրա եվրոպական այլընտրանքային տարբերակի շուրջ ԵՄ-ԱՄՆ մրցապայքարի ծավալումը:

Ինչ վերաբերում է տարածաշրջանային երկրներին, ապա պետք է ասել, որ տարածաշրջանի վերակազմավորումն, ըստ ծրագրի, պայմանավորվում է նրանց վերակազմավորմամբ: Քանի որ դա, բացառությամբ Իսրայելի, վերաբերում է բոլորին, գործող վարչակարգերի տապալման անխուսափելի հետեւանքով, ուստի ծրագրին բուռն հակազդեցություն են ցուցաբերում նաեւ այն երկրները, որոնք տարածաշրջանում ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակիցներն են: Սա նշանակում է, որ Մերձավոր եւ Միջին Արեւելքի վերակազմավորման պարագայում խնդիրը սոսկ տարածաշրջանի «վերածեւումը» չէ, այլ ամերիկյան քաղաքականության մեջ «ռազմավարական դաշնակից» հասկացության վերանայումը:

Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ ԱՄՆ-ը տարածաշրջանի վերակազմավորմանը զուգընթաց տարածաշրջանային երկրներին ենթարկում է ռազմավարական վերախմբավորման, ինչն իր հերթին անհրաժեշտ է դարձնում նրանց նոր տեղի եւ դերի հաստատումը: Ինչպիսին կլինի այդ տեղն ու դերը, դժվար է ասել: Բայց որ տարածաշրջանն Իրաքի օրինակով է վերակազմավորվում, իսկ Իրանը վերակազմավորման ճողի տակ, փաստորեն, կանգնել է կազմալուծման սպառնալիքի առջեւ, ակնհայտ է:

Խոսքը տվյալ դեպքում Իրաքի քրդերին արաբ մեծամասնությանը հակադրելու կամ երկրում շիա-սունիական բախումներ հրահրելու ԱՄՆ-ի նկրտումների մասին չէ, այլ «ժամանակավոր սահմանադրության», որը մարտի 8-ին ստորագրել են ամերիկյան վարչակազմի ղեկավար Փոլ Բրեմերն ու Իրաքի կառավարող խորհրդի բոլոր 25 անդամները: Սահմանադրությամբ Իրաքը դառնում է դաշնային հանրապետություն: Քանի որ դաշնության սուբյեկտներն են Հյուսիսային Իրաքը՝ քուրդ բնակչությամբ, Կենտրոնական Իրաքը՝ սունի, իսկ Հարավայինը՝ շիա արաբներով, իսկ սահմանադրությունը ինչպես քրդերին, այնպես էլ սուննիներին եւ շիաներին օժտում է ինքնիշխանության հատկանիշներով, ուստի երկիրը ոչ միայն էթնիկ եւ դավանանքային հիմունքներով բաժանվում է երեք մասի, այլեւ կանգնում է մասնատման սպառնալիքի առջեւ:

Քուրդ-արաբական բախումներին զուգընթաց նոր պատժամիջոցների կիրառման պատրաստականությամբ Վաշինգտոնն աննախադեպ ուժեղացրել է Սիրիայի վրա գործադրվող ճնշումները: Դրանք պայմանավորվում են այսպիսի պահանջներով, դադարեցնել աջակցությունը պաղեստինյան արմատական կազմակերպություններին, Իսրայելի հետ անհապաղ նստել բանակցությունների շուրջ, հանձնել Սիրիա փախած Սադդամի վարչակարգի անդամներին:

Այս պահանջներից պետք է առանձնացնել Լիբանանի տարածից սիրիական ստորաբաժանումները դուրս բերելու եւ այդ երկրի ներքին գործերին Սիրիայի միջամտությանը վերջ տալու պահանջը: Այն առումով, որ ԱՄՆ-ի պահանջները թեկուզ մասամբ կատարելով Սիրիան ստիպված է լինելու տարածաշրջանում կորցնել իր քաղաքական կշիռն ու ազդեցությունը: Դա իր հերթին լուրջ հարված է հասցնելու արաբական միասնականության գաղափարին: Իսկ Լիբանանից սիրիական ստորաբաժանումները դուրս բերելու դեպքում այս երկիրն անպատշաճ է մնալու Իսրայելի ոտնձգություններից: Հատկապես այն դեպքում, երբ Արիել Շարոնի կառավարությունը ջեյխ Ահմեդ Յասինի սպանությունից հետո «Համասի» եւ «Իսլամական ջիհադի» կողքին պատերազմ է հայտարարել Լիբանանի հարավում տեղակայված «Հզբոլլահին»:

Հարավային Լիբանանի նկատմամբ Իսրայելի ագրեսիվ նկրտումները հայտնի են: Միաժամանակ Լիբանանը խայտաբղետ ազգաբնակչությամբ ունի ինչպես միջէթնիկ, այնպես էլ միջդավանանքային բախումների հրահրման բոլոր նախապայմանները: Այս ամենը խոցելի է դարձնում Լիբանանին, ընդ որում՝ ոչ միայն Իսրայելի, նաեւ ԱՄՆ-ի համար: Կասկածից վեր է, որ Լիբանանի խոցելիության աստիճանը պայմանավորելու է ԱՄՆ-ի ճնշումներին դիմակայելու Սիրիայի կարողությունները: Այլ կերպ, «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրում Լիբանանի տեղն ու դերը պայմանավորված է ԱՄՆ-Սիրիա հարաբերություններով: Հատկանշական է, որ Հայաստանի պարագայում էլ այդ տեղի ու դերի առումով կարեւոր նշանակություն են ձեռք բերում ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները:

«Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրի հակառուսական ուղղվածությունը հայ-ռուսական ռազմական եւ ռազմավարական համագործակցության պայմաններում, ինչ խոսք, խոցելի է դարձնում նաեւ Հայաստանը: Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը եւ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը էլ ավելի է բարդացնում նրա վիճակը: Այլ կերպ, ռուս-ամերիկյան մրցապայքարի մեջ ներքաշված Հայաստանը նշանառության թիրախ է դառնում ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ Թուրքիայի համար: Հարկ է սակայն նշել, որ վերջին տարիներին եւ հատկապես Վրաստանում ռազմական ներկայություն ապահովելուց հետո ԱՄՆ-ն Անդրկովկասում ինքնուրույն է գործում: Այլեւս նրա գործունեությունն, ինչպես նախկինում էր, Թուրքիայով միջնորդավորված չէ:

Միաժամանակ ակնհայտ է, որ Անդրկովկասն ու Միջին Ասիան «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրում ընդգրկող ԱՄՆ-ը չի կարող հանդուրժել Ադրբեջանի եւ միջինասիական թուրքալեզու հանրապետությունների մասնակցությամբ տնտեսական, քաղաքական, մշակութային որեւէ համագործակցության ստեղծումը Թուրքիայի գլխավորությամբ: Սա նշանակում է, որ Հայաստանը որպես գործոն, բացի Ռուսաստանից, անհրաժեշտ է նաեւ ԱՄՆ-ին: Եթե Անդրկովկասում Ռուսաստանի՝ Միջին Ասիայում, իսկ Վրաստանի՝ Անդրկովկասում ռազմական ներկայության պայմաններում Հայաստանը չեզոքացնում է թուրքական ազդեցությունը, ապա ԱՄՆ-ի ռազմական ներկայությամբ նա սահմանափակելու առաջադրանքով կհակադրվի Թուրքիայի ազդեցությանը:

Դրա գրավականը թուրքալեզու հանրապետությունների համագործակցության Թուրքիայի ձգտումներն են, որոնք հակասում են ինչպես Անդրկովկասում ու Միջին Ասիայում ամերիկյան ռազմական ներկայության, այնպես էլ այդ տարածքները «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրում ընդգրկելու ԱՄՆ-ի տրամադրություններին:

Ինչ վերաբերում է թուրք-ամերիկյան ռազմավարական շահերին, ապա դրանց հակասությունն էլ թերեւս արտահայտվում է վերակազմավորման միջոցով Իրաքի մասնատման՝ առավել եւս երկրի հյուսիսում քրդական ինքնավարության առջեւ դաշնության սուբյեկտիվ կարգավիճակով փաստացի անկախության հեռանկար բացելու ԱՄՆ-ի պատրաստակամությամբ: Թերեւս այդ առումով պատահական չէ, որ հակաիրաքյան պատերազմի նախօրեին ծայր առած թուրք-ամերիկյան տարաձայնությունները դրա ավարտին վերածեցին լուրջ հակասությունների, եւ ԱՄՆ-ն, անկախ «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրից, սկսեց վերանայել Թուրքիայի հետ ռազմավարական դաշինքի նպատակահարմարությունը:

Թեեւ հակասությունների սրման պայմաններում Թուրքիան կարողացավ մերձենալ ԵՄ-ին, եւ այս կառույցը թուրքական գործոնի միջոցով Անդրկովկաս ներթափանցելու հավակներով սկսեց աննախադեպ ակտիվություն ցուցաբերել դարաբաղյան հարցում, բայց Թուրքիան այլեւս կարեւոր գործոն չէ, նրա միջոցով Անդրկովկաս ներթափանցելու հավակներն ընդամենը կտրեն ԵՄ-ի հետ ԱՄՆ-ի հակասությունները: Քանի որ այդ հակասությունները ԵՄ-ի պարագայում պայմանավորված են «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրով, իսկ Թուրքիայի ծրագրին համապատասխան տարածաշրջանային երկրների վերակազմավորմամբ, ուստի հակասությունների սրումը վերջիններիս առջեւ բացում է ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի միջեւ խուսանավելու հեռանկար: Թերեւս դա նրանց կտա ծրագրի կործանարար հետեւանքները նվազագույնի իջեցնելու հնարավորություն: Այդ ընթացքում Հայաստանն էլ կխուսանավի ԱՄՆ-ի եւ Թուրքիայի միջեւ, որպեսզի թուրքական պետության հակահայկական քաղաքականությունը չեզոքացնելիս, այդ չեզոքացումը պայմանավորի Թուրքիայի ազդեցությունն Անդրկովկասում սահմանափակելու ԱՄՆ-ի քաղաքական հավակներով:

Սաակաշվիլու վերջնագրերը չեն ազդում Աբաշիձեի վրա

Աջարիայի խնդիրը սրվում է

Աջարիայում իրավիճակը մնում է լարված: Վերջին օրերի իրադարձությունները փոխացնում են արդեն հակամարտության վերածվող այդ խնդրի խաղաղ կարգավորման հավանականությունը:

ԱՄՆ պետքարտուղարությունը դատապարտում է Աջարիայի ղեկավարության Վրաստանի մնացած հատվածի հետ կապող հնգնավարության վարչական սահմանի կամուրջը պայթեցնելու որոշումը: Պետքարտուղարության մայիսի 3-ի հայտարարության համաձայն, նման գործողությունների հետևանքով շարից դուրս են եկել միջազգային կարևորություն ունեցող տրանսպորտային ուղիները: Դրանք կենսական նշանակություն ունեն նաև Աջարիայի եւ ողջ Վրաստանի բնակչության համար:

ԱՄՆ-ը կրկին Վրաստանին կոչ է արել հակամարտության լուծման համար օգտագործել խաղաղական եւ տնտեսական մեթոդներ:

Աջարիայի իրադարձությունների առնչությամբ դժգոհություն է հայտնել նաեւ Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Վալտեր Շվիմերը: Նա եւս կողմերին կոչ է արել հարցը լուծել միայն խաղաղ ճանապարհով, նշելով, որ ցանկացած կամուրջ կարելի է վերականգնել, բայց ոչ մի մարդկային կյանք հնարավոր չէ վերականգնել:

Երեկ արդեն Աջարիայում Քոբուլեթում ոստիկան Սուսիձեի ոստիկանության ցույցի էին դուրս եկել հնգնավար հանրապետության ուսանողները: Վրացական «Ռուսթավի 2» հեռուստաընկերության համաձայն, Քոբուլեթի ցույցերը հետեւել են Բաթումում տեղի ունեցած ցույցերին, որոնց ժամանակ ոստիկանությունը ծեծել է որոշ ցուցարարներ: Ցերեկվա ժամը 3-ից հետո Աջարիայի անվտանգության ուժերը գրեցին ցուցարարներին:

Ինչպես լրագրողներին երեկ հայտարարել է Բաթումի քաղաքային ոստիկանության ղեկավար Թամազ Ջորդինաձեն, ցույցի մասնակիցները հրաժարվել են խաղաղ հեռանալ, եւ ոստիկանությունը ստիպված ուժ է գործադրել՝ օգտագործելով փայտե մահակներ: Ըստ Ջորդինաձեի, Սաակաշվիլին ցանկություն է հայտնել խոսել ցուցարարների հետ, բայց այդ առաջարկը մերժվել է:

Դժգոհություններն առաջացել են նախ եւ առաջ այն պատճառով, որ Ասլան Աբաշիձեի հրահանգով փակվել են Աջարիայի միջնակարգ դպրոցներն ու համալսարանները:

Երեկ հայտնի դարձավ նաեւ, որ Աջարիայի ոստիկանությունը ծերբակալել է «Ժողովրդավարական Աջարիա» ընդդիմադիր շարժման ներկայացուցիչ Ռոման Կիրկիտաձեին: Ըստ վկաների, ոստիկան, ծերբակալության ժամանակ ոստիհամաձայն, կամուրջների պայթեցման կազմակերպիչ է համարվում ռուս գեներալ Նեստկաչովը: Նա 1999 թ.-ից Ասլան Աբաշիձեի ռազմական հարցերով խորհրդականն է: Իսկ քաղաքական փորձագետներն ու վերլուծաբանները հակված են կարծելու, որ Աբաշիձեն ոչ մի կերպ չի համաձայնի Սաակաշվիլու առաջադրած պայմաններին:

Միակ ելքը մնում է այն, որ Վրաստանի սահմանադրության համաձայն, երկրի նախագահը խորհրդարանի համաձայնությամբ լուծարում է տարածքային միավորների կամ հնգնավարության պետական մարմինները, եթե նրանց գործունեությունը վտանգում է երկրի տարածքային ամբողջականությանը եւ հնգնիշխանությանը:

Նման նախագիծ արդեն իսկ պատրաստվում է Վրաստանի խորհրդարանում: Ընդ որում, նման նախագծի քննարկման դեպքում Աջարիայի իշխանությունները կհայտարարվեն անօրինական:

Ընդհանուր առմամբ, հենց Աջարիայի բնակիչների հավաստմամբ, ներքին լարվածությունն այնքան էլ չի արտահայտվում արտաքնապես: Թերեւս միայն Բաթումի փողոցներում շատացել են ոստիկանական մեքենաները, հաճախակիացել են ստուգումները, որոշ սննդամթերքներ քանկացել են:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թբիլիսի

Ադրբեջանի նախագահը դժվար ընտրության առաջ

ՆԱՏՕ՞, թե՞ Ռուսաստան

էլեկտրոնով ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ ադրբեջանական «Ենի Մուսաֆաթ» օրաթերթի մայիսի 3-ի համարում քաղաքական մի հոդված է տպագրվել «ՆԱՏՕ-ի գագաթաժողովը հետ չի լինելու Իլհամ Ալիեւի համար» վերնագրով, որտեղ խոսվում է այն մասին, որ Հյուսիսատլանտյան դաշինքի անդամներն ակնկալում են «Ադրբեջանի անդամակցությունը»:

Հունիսին Ստամբուլում անցկացվելիք գագաթաժողովի օրակարգում հիմնականում լինելու է հարավկովկասյան տարածաշրջանը: Վաշինգտոնում տեղակայված «Բարձրագույն մարտավարական եւ քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտի» ավագ գիտաշխատող Վլադիմիր Սոկորը «ՆԱՏՕ-ի գագաթաժողովի հետագա անելիքները» հոդվածում գրում է, որ դաշինքի ղեկավարները հետեւողականորեն աշխատում են Հարավային Կովկասի մարտավարության վրա: Նա շեշտում է, որ ստամբուլյան հանդիպումն ամենահարմար առիթն է Ադրբեջանի համար՝ հայտարարելու կառույցին անդամակցելու իր մտադրությունը: Սա, իհարկե, պատշաճական քաղաքական շրջանակների դիրքորոշման արտացոլումն է, քանի որ նրանք հաճախակի արտահայտվել են այդ առնչությամբ: Այդ մասին են ակնարկել նաեւ Ադրբեջանում Մ. Նահանգների դեսպան Ռենո Հարնիշը, եւ Մ. Նահանգների եվրոպական հրամանատարության փոխհրամանատար, գեներալ Չարլզ Ուլլոը:

Այս բոլորից առաջ Իլհամ Ալիեւը հանդես էր եկել մի հայտարարությամբ, որով բացառում էր Ադրբեջանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին: «Դա մոտ ապագայի մեր խնդիրների թվում չէ», ասել էր նա, հասկացնելով, որ Ադրբեջանը գտնվում է Ռուսաստանի շահերի ոլորտում: Մնում է, որ այս ամսվա ընթացքում նա կողմնորոշվի՝ վերջնականապես սահմանափակե՞լ համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ, թե՞ անդամակցել եւ հեռանալ Ռուսաստանից: Այլապես նա չի կարող հավասարապես գոհացնել եւ Արեւմուտքին, եւ Արեւելքին: Իսկ տարբերակները, երկու դեպքում էլ կարող են ծեռնտու չլինել Ալիեւին: Ռուսաստանի կողմը բռնելու դեպքում Արեւմուտքը հասկանալու է, որ սխալվել է նրան իր հոր աթոռին նստեցնելով: Մյուս կողմից, եթե նա պատշաճապես հայտարարի ՆԱՏՕ-ի կառույցին անդամակցելու իր մտադրությունը, ապա դրժած պիտի լինի Մոսկվային տված իր խոստումները:

Իրաքցի բանտարկյալներին ծանակած ամերիկացի 7 զինծառայողներ պատժվել են

ԱՄՆ զինվորական հրամանատարությունը կարգապահական տույժեր է կիրառել Բաղդադի Աբու Ղրաիբ բանտում իրաքցի կալանավորներին ծաղրուծանակի ենթարկած ամերիկացի 7 զինծառայողների: Զինվորական աղբյուրներից մեկն իր անունը չհրապարակելու պայմանով Ասոշիեյթեդ Պրես գործակալության թղթակցին ասել է, որ 7-ից 6-ը ենթարկվել են ամերիկյան բանակում հնարավոր ամենախիստ պատժին: Որոշ տվյալների համաձայն, տույժի կարող են ենթարկվել անհամեմատ մեծ թվով զինծառայողներ:

Նույն աղբյուրը ենթադրություն է արել, թե այդ զինծառայողների գործերը չեն քննվի զինվորական դատարանում, բայց նրանց զինվորական կարիերան կարելի է ավարտված համարել:

Օրերս ԶԼՄ-ներում լուսանկարներ էին հրապարակվել իրաքցի գերիների նկատմամբ ամերիկացի զինծառայողների կիրառած ծաղրուծանակի վերաբերյալ: Լուսանկարները զայրացրել էին նախագահ Ջորջ Բուշին, որը պատշաճության նախարար Դոնալդ Ռամսֆելդին կարգադրել էր պատժել մեղավորներին:

Տվյալ գործով արդեն հարցաքննություն ենթարկված զինծառայողներն ասել են, թե գերիների նկատմամբ կիրառվող ծաղրուծանակին մեղսակից է զինվորական հետախուզությունը: Աբու Ղրաիբի պատշտոնակատարված բանտապետ, գեներալ Ջենիս Կարպինսկին լրագրողներին հայտնել է, որ անցյալում ինքը ԿՀՎ աշխատակիցների հետ հանիցս վիճել է բանտարկյալների նկատմամբ հանդես բերվելիք վերաբերմունքի առնչությամբ:

«Հուսեյնը նմանակ չի ունեցել»

Պնդում է նրա անձնական բժիշկը

Սադդամ Հուսեյնի նախկին անձնական բժիշկ Ալա Բաշիրը պնդում է, որ Իրաքի նախկին նախագահը նմանակ չի ունեցել: Եգիպտական «Ալ շարք ալ աուսաթ» թերթում երեկ հրապարակված հարցազրույցում «հերյուրանք» է անվանում Հուսեյնի նմանակների գոյությանն առնչվող պնդումները:

Ներկայումս Քաթարում բնակվող Ալա Բաշիրը հայտնել է, որ ինքը Հուսեյնին վերջին անգամ տեսել է Բաղդադի անկումից 3 շաբաթ առաջ, երբ նրան քննել է զինվորական հոսպիտալում: Բաշիրը հրատարակության է պատրաստում 400 էջանոց հուշագրություն, որը վերաբերում է Հուսեյնի հետ իր անցկացրած 20 տարիներին: Բժիշկը գրում է, որ Հուսեյնի կինը եւ դուստրերը լավ էին վերաբերվում մարդկանց, իսկ Հուսեյնի ավագ որդի Ուդեյին անվանում է «խելացնոր»: Գրքում-նշվում է, որ նախկին նախագահի շրջապատի մարդկանց «արժանիքները» եղել են լոկ «սուտն ու ֆծնանքը»:

Ալա Բաշիրը հարցազրույցում պատմել է, որ իր հուշագրության մեջ բացահայտվում են Իրաքի նախկին վարչակազմի մի շարք գաղտնիքներ: Հուսեյնի ծերբակալությունից հետո Քաթարի ամերիկյան ռազմակայանում նրան տեսած կինը՝ Սաջիդան վերջերս հայտարարել էր, թե չի ճանաչել ամուսնուն, պնդելով, որ իր տեսածը Հուսեյնի նմանակն է: Դրանից հետո աջ ու ձախ սկսել էին խոսել Հուսեյնի նմանակների գոյության մասին, ինչը հերքվում է Ալա Բաշիրի հարցազրույցում:

Յասեր Արաֆաթի նստավայրը շրջափակված է

Երեկ գիշեր Ռամալլայում իսրայելական 15 զրահամեքենաներով շրջափակվել է Պաղեստինյան ինքնավարության նախագահ Յասեր Արաֆաթի նստավայրը: Իսրայելական զինվորական աղբյուրներ վկայակոչելով Իսրայելի ռադիոն հաղորդում է՝ ներկայումս Ռամալլայում անցկացվում է «ահաբեկիչների որոնման սովորական գործողություն, որը որեւէ կապ չունի Արաֆաթի հետ»:

Մինչդեռ Արաֆաթի խորհրդական Նաբիլ Աբու Ռուդեյնան հայտարարել է, որ իսրայելցի զինվորները շրջափակել են Արաֆաթի նստավայրի բոլոր երեք մուտքերը: Խորհրդականն ասել է, որ դա կարող է Արաֆաթի ֆիզիկական ոչնչացմանն ուղղված գործողության սկիզբը լինել: ՈՒԱ գործակալությունը հիշեցնում է, որ ապրիլի վաղ Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը եւ իսրայելցի այլ գործիչներ չէին բացառել Պաղեստինյան ինքնավարության ղեկավարին ոչնչացնելու հնարավորությունը:

Միաժամանակ «Ալ Արաբիա» արբանյակային հեռուստալիքը հաղորդել է, որ Գազայի հատվածում իսրայելական զորքերի հերթական գրոհի ժամանակ սպանվել է առնվազն 2 պաղեստինցի, տասնյակ ուրիշներ վիրավորվել են: Գազայի հարավում Խան Յունիս ճամբարի վրա հարձակված իսրայելցի ոստիկաններն ու զինծառայողները հանդիպել են պաղեստինցիների կատաղի դիմադրությանը: Դրանից հետո իսրայելական ուղղաթիռներից մեկը հրթիռակոծել է ճամբարը:

Նյու Յորքում նավթի գինը հասել է վերջին 13 տարվա ամենաբարձր մակարդակին

Նյու Յորքի ապրանքային բորսայում երեկ տեղի ունեցած սակարկությունից հետո նավթի գինը հասել է ԱՄՆ-ում վերջին 13 տարում արձանագրված ամենաբարձր մակարդակին: Ասոշիեյթեդ Պրեսը հաղորդում է, որ հունիսյան վաճառքի նավթի մեկ բարելի գինը հասել է 38,21 դոլարի, ընդհուպ մոտենալով 1990 թ. հոկտեմբերի 16-ի ցուցանիշին (38,89):

Բենզինի մեծածախ գինը նույնպես բարձրացել է: Ենթադրվում է, որ ամառային արձակուրդից առաջ դա կհանգեցնի բենզինի նաեւ մանրածախ գների աճին: Վերլուծաբանները կարծում են, որ նավթի գների զգալի աճի վրա զգալիորեն ազդել է շաբաթ օրը Սաուդյան Արաբիայի Յանբու էլ Բահր քաղաքում տեղի ունեցած փոխհրաձգությունը: Այդ օրը 4 զինյալներ ներխուժել էին ամերիկասաուդյան «էյ Բի Բի Լուբրիքանտս» համատեղ նավթային ընկերության գրասենյակ եւ անկանոն կրակ բացել աշխատակիցների վրա: Զոհվել էին երկու ամերիկացի, երկու բրիտանացի, մեկ ավստրալացի եւ մեկ սաուդցի: Վրա հասած ոստիկանները սպանել էին զինյալներին:

Մասնագետները չեն բացառում, որ Մերձավոր Արեւելքում նավթային ծեռնարկությունների վրա հարձակումները շարունակվեն, խախտելով տարածաշրջանային նավթի առքուվաճառքի կանոնավորությունը:

Պ. Ք.

Իրաքում գերի է ընկել եւս մեկ կանադացի

Կանադայի կառավարության աղբյուրներ վկայակոչելով CBS հեռուստաընկերությունը հաղորդում է, որ Իրաքում գերի է ընկել Կանադայի քաղաքացի Նաջի ալ Քուվեյթին: Գերեվարությունը տեղի է ունեցել անցյալ չորեքշաբթի: Քուվեյթին պատանդ է վերցրել մի անհայտ խմբավորում:

Ըստ Կանադայի ԱԳՆ տվյալների, առեւանգումները թերեւս քաղաքական կամ կրոնական բնույթ չեն կրում: Առեւանգման համար պատասխանատու է համարվում ինչ-որ «չարագործների խումբ»: Ստացված տվյալների համաձայն, գերու հետ բավական լավ են վարվում:

Տորոնտոյի բնակիչ ալ Քուվեյթին Իրաքում զբաղվում էր առեւտրային հարցերով: Պատերազմի սկզբից ի վեր նա Իրաքում գերի ընկած արդեն 3-րդ կանադացին է: Առաջինը մարդասիրական ծառայության աշխատակից Ֆադի Ֆադելն էր: Նրան առեւանգել էին անցյալ ամիս եւ մեկ շաբաթ անց բաց թողել: Երկրորդ պատանդի՝ Ռիֆաթ Մոհամմադի ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ ապրիլի 8-ից: Նա Բաղդադի մոտակայքում կորել էր շինարարությունում աշխատելիս:

Կանադայի բոլոր քաղաքացիներին առաջարկված է անհապաղ հեռանալ Իրաքից, քանզի նրանց կյանքին վտանգ է սպառնում:

Մշակույթ

Էլիզաբեթ Բելլի հեղինակային համերգում

Չնայած տեղեկատվական գրականության եւ բառարանների առատությանը, արվեստագետներին առնչվող տեղեկատվությունը տակավին մնում է անբավարար: Բացի դրանից, արվեստի ոչ մի նկարագրություն չի կարող փոխարինել արվեստի օբյեկտի, այսինքն՝ բուն գեղարվեստական ստեղծագործության հետ հանդիպմանը: Ուստի այդման կարեւոր է դրան ուղղված ամեն մի ծեռնարկում, քանզի այն լրացնում է մեր գիտելիքներն արդի գեղարվեստական ոլորտի գեղարվեստական ոլորտի վերաբերյալ:

Ահա թե ինչու խորին երախտագիտության զգացում է առաջացնում Երեւանում ամերիկացի կոմպոզիտոր էլիզաբեթ Բելլի 75-ամյակի առթիվ նրա հեղինակային համերգի կազմակերպումը: Երեկոյի նախաձեռնողը բոստոնցի կոմպոզիտոր Հայկ Բոյաջյանն էր, իսկ նախագծի կազմակերպիչ-իրականացնողը՝ երեւանցի կոմպոզիտոր Էդուարդ Սաղոյանը: Պետք է ասել, որ վերջին տասնամյակի ընթացքում Սաղոյանի ջանքերով Երեւանում անցկացվել են ժամանակակից ամերիկյան երաժշտության տարբեր երեկոներ: Է. Բելլի անունն ազդարարի վրա հայտնվել է քանիցս. այսպես, 1997 թ. երկու անգամ, ապա 1998, 1999 եւ 2002 թթ.: Ընդ որում, ամեն անգամ նրա ստեղծագործություններն արժանանում էին այդ երեկոների ունկնդիրների առանձնահատուկ ուշադրությանը:

Այդուհանդերձ, էլիզաբեթ Բելլի ստեղծագործություններից մենահամերգ նախապատրաստելն ու կազմակերպելը հատկապես դժվար ու պատասխանատու գործ էր, քանզի հարկավոր էր ստեղծել ամերիկացի կոմպոզիտորի երաժշտական դիմանկարը: Այդ նպատակով հավաքվեցին առավելապես 80-ական թթ. ստեղծված մենանվագային, համույթային եւ նվագախմբային գործերը: Համերգավար էդուարդ Սաղոյանն իր ելույթում ուրվագծեց Բելլի ստեղծագործական հետաքրքրությունները՝ «Սամ Խաչատրյան» համերգասրահի ունկնդիրներին հայտնելով, որ հեղինակը, ցավոք, չի կարողացել ներկա գտնվել Հայաստանի մայրաքաղաքում իր մեծարմանը:

Էլիզաբեթ Բելլը ծնվել է Ցինցինատիում, իսկ այժմ բնակվում է Նյու Ջերսիում: Կոմպոզիտորը հայրենիքում լայն ճանաչում է ստացել, նրա ստեղծագործությունները քանիցս արժանացել են մրցանակների ու պարգեւների, մտել զանազան մենակատարների ու խմբերի նվագացանկի մեջ: Հետաքրքրական է, որ «Կոնցերտինո» դաշնամուրային դուետը եւս երկրորդ անգամ է դիմում տվյալ ծրագրում ընդգրկված Բելլի ստեղծագործությանը:

Եթե դատենք մեր լսածից, Բելլի ստեղծագործական հետաքրքրությունները ծգվում են ավելի շուտ դեպի եվրոպական ավանդույթները: Միայն համերգը բացած Մեկ թավջութակի «Soliloquy» (1980) շարքն հիշեցնում Վիլլա Լոբոսի «Բրազիլական բախիանաների» գաղափարը: Լեւոն Առաքելյանի կատարմամբ այդ ստեղծագործությունը հնչեռանգային առումով իներտ էր թվում:

Է. Բելլն առավել մեծ արտահայտչականության է հասնում վոկալ երաժշտության մեջ. Երեւանում ավելի վաղ հնչած համերգներում մշտապես առանձնանում էին նրա վոկալ շարքերը, որոնք տպավորվում էին պայծառությամբ եւ երաժշտական արտահայտչականությամբ: Այս անգամ էլ սոպրանոյի, կլարնետի եւ դաշնամուրի համար գրված «Millenium» (1988) ստեղծագործությունը միջազգային մրցույթների դափնեկիր Արծվիկ Դեմուրչյանի, Սուրեն Խորոզյանի եւ Լեւոն Ջավադյանի կատարմամբ դահլիճը հմայեց զգացմունքների ճշմարտացիությամբ: Երաժշտական առումով վաղ էքսպրեսիոնիստական ավանդույթին մոտեցող այդ ստեղծագործությունը շահեկանորեն ի հայտ բերեց Դեմուրչյանի վոկալ տվյալները: Անգամ սկզբնական վոկալիզում (դրան հաջորդում էր Լեւիս Թոմասի տեքստը) երգչուհու ձայնը հասնում էր ստերին: «Millenium»-ը կարելի է մեկնաբանել որպես կորուսյալ արժեքների եւ, որոշ իմաստով՝ ռոմանտիկ իդեալի կարոտ: Ստեղծագործության բացահայտ հուզականությունը վկայում էր էլիզաբեթ Բելլի ճնարական ձիրքի մասին:

Առհասարակ Բելլի արվեստի մասին խոսելիս չի կարելի անուշադրության մատնել այն փաստը, որ նա կին կոմպոզիտոր է: Տվյալ դեպքում դրանով պետք է հասկանալ «մեզ մշտապես ծգող հավերժ կանացիի» (8-րդ սիմֆոնիայում Գուստավ Մալերի օգտագործած մեծն Գյոթեի խոսքը) ներկայությունը, ինչպես նաեւ դրանից բխող երաժշտական բարդ պոետիկայի գեղարվեստական վերարտադրության զգայունությունը:

Որպես օրինակ կարելի է բերել երեք զգացմունքների ճշմարտացիությամբ: Երաժշտական առումով վաղ էքսպրեսիոնիստական ավանդույթին մոտեցող այդ ստեղծագործությունը շահեկանորեն ի հայտ բերեց Դեմուրչյանի վոկալ տվյալները: Անգամ սկզբնական վոկալիզում (դրան հաջորդում էր Լեւիս Թոմասի տեքստը) երգչուհու ձայնը հասնում էր ստերին: «Millenium»-ը կարելի է մեկնաբանել որպես կորուսյալ արժեքների եւ, որոշ իմաստով՝ ռոմանտիկ իդեալի կարոտ: Ստեղծագործության բացահայտ հուզականությունը վկայում էր էլիզաբեթ Բելլի ճնարական ձիրքի մասին:

Առհասարակ Բելլի արվեստի մասին խոսելիս չի կարելի անուշադրության մատնել այն փաստը, որ նա կին կոմպոզիտոր է: Տվյալ դեպքում դրանով պետք է հասկանալ «մեզ մշտապես ծգող հավերժ կանացիի» (8-րդ սիմֆոնիայում Գուստավ Մալերի օգտագործած մեծն Գյոթեի խոսքը) ներկայությունը, ինչպես նաեւ դրանից բխող երաժշտական բարդ պոետիկայի գեղարվեստական վերարտադրության զգայունությունը:

Որպես օրինակ կարելի է բերել երեք դաշնամուրի համար 1987 թ. գրված «Douvarios» վարիացիաները («Կոնցերտինո» դուետ՝ Անի Եղիազարյան եւ Բելլա Ավետիսյան): Մեր դաշնակահարները մեկ շնչով կատարեցին ամբողջ ստեղծագործությունը՝ բացահայտելով դրա բազմազան ոճային ներկապնակը: Ա. Վեբերնին հիշեցնող սկզբնական մասից հետո զարգացումը հարատեւեց զիլ արձագանքող հնչողության բնագավառ տանող անսպասելի ոճային շեղումներով: Հիրավի, այդ ստեղծագործությունն ավելի քան լավ է համապատասխանում երաժշտության հեղինակի անվանը՝ «bell»՝ զանգ, ղողանջ...

Շեւի տեսակետից հետաքրքրական «Peme in a Gyze» պիեսը (1984) դարձավ ժամանակակից երաժշտության «AUS» համույթի անսամբլային մտահավատության շահեկան դրսեւորումը: Հետաքրքրական էր նաեւ ջութակի, կլարնետի, թավջութակի եռյակը (Վլադիմիր Յասկորսի, Արմեն Ղազարյան, Լեւոն Առաքելյան) նվագակցող դաշնամուրին (Արթուր Ավանեսով) համադրելու՝ բարձրակետում միահամուռ ունիսոնի հանգեցնող գաղափարը: Համույթը նվագում էր խոհեմ ու ներդաշնակ:

Ծրագիրը եզրափակած Դաշնամուրի ու նվագախմբի «Andromeda» կոնցերտը (1993) իրենից ներկայացնում է մեկնասանի ստեղծագործություն, որը տրոհված է 3 բաժնի՝ մենակատարի ծավալուն կադենցիայով: Ինչպես եւ մյուս գործերում (հատկապես «Peme in a Gyze»-ում), «Andromeda»-ում զգացվում է ծրագրային մտահղացման առկայությունը: Երաժշտական պատմողականության կնիքը ծեւավորում է ինչպես ընդհանուր դրամատուրգիան, այնպես էլ առանձին բաժինների եւ զարգացման ամբողջ տրամաբանության լուծումը: Դաշնակահար Հայկ Մելիքյանը Գեւորգ Մուրադյանի ղեկավարած Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի լարային եւ հարվածային խմբերի հետ կազմեց մեկ ամբողջություն: Բելլի ստեղծագործությունը, այստեղ զուգորդվելով Բարտոկի «Երաժշտությանը» եւ ասես շարունակելով հունգար ականավոր վարպետի գյուտերը, արձագանք էր գտնում հայ կատարողների հոգում: Այդ ներշնչանքը փոխանցվում էր նաեւ դահլիճի ունկնդիրներին դառնալով այն ճշմարտության պերճախոս վկայությունը, որ արվեստի լեզուն ընդհանրական է. այն բովանդակ աշխարհի մարդկանց միավորում է մի ընդհանուր աշխարհում:

Այդ աշխարհի մի մասն էլիզաբեթ Բելլի երաժշտությունն է: Երեւանում նրա հեղինակային համերգի անցկացումը հոբելյանական ողջույններով համերաշխության քայլ է ի պատիվ ամերիկացի հայտնի կոմպոզիտորի:

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

Ֆրանսահայ նկարչուհին իր անդրանիկ ցուցահանդեսն է բացելու Երեւանում

Հայկական կերպարվեստի երկրպագուներին գրեթե ծանոթ չէ Ասիլվա անունը, սակայն պարզվում է, որ Փարիզում ապրում եւ ստեղծագործում է այդ անունով մեր հայրենակցուհին, որն այս օրերին գտնվում է մայր հայրենիքում իսկ սեպտեմբերի 1-10-ն իր անհատական ցուցահանդեսն է բացելու Հայաստանի նկարչի տանը:

Նկարչուհին ծնվել է Կ. Պոլսում, որտեղ, իսկ հետագայում Իտալիայում մասնագիտական կրթություն է ստացել, ըստ որում իր աշխատանքի համար թուրքական մրցանակ է ստացել (մի բան, որ հազվադեպ է պատահում հայի նկատմամբ այդ երկրում), իսկ Ֆլորենցիայում նրա արձանիկներից մեկը ներկայացվել է ոչ ավելի, ոչ պակաս... Միքելանջելոյի աշխատանքի հարեւանությամբ:

Ասիլվան արդիական նկարչության հետեւորդ է, բայց եթե հարկ է լինում, անդրադառնում է հայոց ցեղասպանությանը կամ ստեղծում Սերգեյ Փարաջանովի հավաքական կերպարը: Նրա վերացական գործերում անգամ զգացվում է հայկական շունչը:

«Մոտ շրջանում գնալու եմ Ճապոնիա, որտեղ ցուցահանդես պիտի անեմ, ասում է նկարչուհին: Ու ներկայացնեմ հայ լինելու էությունս»:

Այդպես նա աշխարհե աշխարհ է շրջել՝ Եվրոպա, Ասիա, Ամերիկա, այլուր, որտեղ մամուլը, մասնագետները ըստ արժանվույն են գնահատել նրա աշխատանքները, հավաքորդները ծեռք բերել դրանք:

Նկարչուհին երկրորդ անգամ է այցելում Հայաստան: Առաջին այցելության ժամանակ ծանոթություններ է ստեղծել, ներկայացել հեռուստատեսությամբ: «Հիմա արդեն վստահ եմ, որ կարող եմ գործերս ցուցադրել: Նաեւ պայմանավորվածություն ունեմ, որ ցուցահանդես այնուհետեւ տանեմ Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք», ասում է Ասիլվան:

ՎԱՌԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Արմենպրեսի թղթակից
«Ազգի» համար

ԳՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Վահան Թեքեյանը՝ գիտական ուսումնասիրությամբ

Վահան Թեքեյանի 125-ամյակն անցած տարի ամենատարբեր մակարդակներով եւ ծավալներով նշվեց ըստ արժանվույն թե՛ սփյուռքում, թե՛ Հայաստանում: Միջոցառումների շարքում առանձնացավ ՀՀ Թեքեյան մշակութային միության, Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի եւ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի համատեղ ջանքերով կազմակերպված բանաստեղծի 125-ամյակին նվիրված գիտաժողովը ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Օրերս Հայաստանի Թեքեյան մշակութային միության ջանքերով լույս տեսավ գիտաժողովում հնչած զեկուցումների ժողովածուն (հեղինակներ Ս. Կարապետյան, Վ. Կիրակոսյան, Կ. Դալլաքյան, Ա. Եղիազարյան, Վ. Գաբրիելյան, Ա. Ավագյան, Լ. Մելրանյան, Ա. Մեսիեբձյան, Ս. Գալստյան): Գրքույկը տպագրվել է ԹՄՄ Դեսդեմոնայի մասնաճյուղի հովանավորությամբ, **«Ազգ»** օրաթերթի աջակցությամբ:

Ժողովածուի գինեծոնը տեղի ունեցավ երեկ՝ Հայաստանի Թեքեյան մշակութային միության ցուցասրահում՝ մտավորական ընտանու նեղ շրջանակում: ԹՄՄ նախագահ Ռուբեն Միրզախանյանը բացման հակիրճ խոսքում նշեց Թեքեյանի ծննդյան 125-ամյակի առիթով վերոհիշյալ նստաշրջանի ուրույն բնույթը՝ նկատի ունենալով, անշուշտ, դրա գիտական արժեքը եւ կարեւորեց այդ ուսումնասիրություն-զեկուցումների տպագիր տարբերակը՝ իբրեւ մնայուն փաստ: Իսկ ՀՊՄ նախագահ Լեւոն Անանյանն անդրադառնալով հալեպյան դվագներին՝ հիշեց բանաստեղծի «Գաղտնի պարտեզ» գրքի շնորհանդեսի այն ոգին, որ «այստեղ՝ Հայաստանում պիտի երկար փնտրենք»:

Օրերս Հայաստան եկած ՌԱԿ ատենապետ, ԱՄՆ-ի եւ Կանադայի ԹՄՄ կենտրոնական վարչության փոխնախագահ, գրականագետ Երվանդ Ազատյանը նկատեց, որ հայաստանյան բիզնեսային ներկա հագեցած մթնոլորտում հաճելի անակնկալ է գրքերի շնորհանդեսներին մասնակցելը, երբ մտավորական կյանքն ավելի ցածր մակարդակի վրա է: Նա վերհիշեց Սիլվա Կապուտիկյանի հետ հանդիպման տպավորությունները Վահան Թեքեյանի առիթով 1963 թ. Եգիպտոսում, ժամանակներ, երբ Վահան Թեքեյանը հայաստանյան ընթերցողներին այնքան էլ ծանոթ չէր: Բոլորովին այլ է պատկերն այսօր, որը եւ «պարտադրում» է Թեքեյանի ծանոթացումը հայաստանցի գրասերին առեն ակադեմիական մակարդակով: Երվանդ Ազատյանը կարեւորեց երեւանում Վահան Թեքեյանի անվան փողոց ունենալու անհրաժեշտությունը, մի բան, որ նաեւ խորհրդանշական կլինի հայության միասնականության առումով:

Գրականագետ Վազգեն Գաբրիելյանը հարկ համարեց արժանին մատուցել Թեքեյան մշակութային միությանը, որ կազմակերպչական առումով կարողացավ պատշաճորեն ներկայացնել Թեքեյանի անունը:

Շնորհանդեսին ներկա էր գրող, բարգմանիչ Կարապետ Սուրենյանը, եւ կարճ զույց ունեցանք նրա հետ: Անցյալ նոյեմբերին գիտական նստաշրջանի մասնակիցների մեջ նա միակն էր, որ ավելի անմիջական շփում էր ունեցել բանաստեղծի հետ՝ ուսանելով Թեքեյանի հիմնած Մելգոնյան կրթարանում, երբ Թեքեյանն արդեն մեկնել էր եւ աշակերտել էր բանաստեղծի մտերիմ ու մեծ մանկավարժ Պողոս Գեւորգյանին: «Անմիջականորեն Թեքեյանի շունչն ես զգացել, նա մեզ համար հեռու եղած մեկը չէր, այլ ուսուցիչ եղած մարդ էր: Թեքեյանը մեզ համար այնտեղ՝ սփյուռքում, բուրգերի (եգիպտոս) մոտ կանգնած մի փարոս էր, իսկ Արարատից էլ՝ Իսահակյանն էր մի փարոս, եւ մենք հոգեպես արդում էինք այս երկու փարոսների կամարի տակ: Հիշեցի նրա մահը՝ 1945-ին, ինչպես ազդվեցինք, սգո հանդեսը կատարեցինք»: Կարապետ Սուրենյանի ելույթի այս ոգուն բուռն արձագանքեցին նստաշրջանի մասնակիցները, սակայն ժողովածուի մեջ այն ընդգրկված չէ՝ եւ, ցավոք, ոչ իսկ ակնարկված գրքույկի առաջաբանում:

ՄԵԼԻՆԵ ԲԱԳԱԼՅԱՆ

ԱՌԱՋԱՐԿ

Հարկ է արժանին հատուցել արժանավորին

Եթե 21-րդ դարում որեւէ հայ կնճ ֆրանսիական (հիրավի, նաեւ հայկական) երգարվեստի պանթեոնում, անշուշտ, երգի արքա Շառլ Ազնավուրն է լինելու: Նա, ինչպես բազմիցս է հիշատակվել, հույժ բարձր է գնահատում հարգանքը, որի բացակայությունը «մեծաթիվ չարյաց սկզբնաղբյուր է»:

Հինգերորդ տարին է «Մոսկվա» կինոթատրոնի հարակից կոկիկ տարածքը անվանակոչվել է «Շառլ Ազնավուրի հրապարակ»:

Ամեն ինչ ճիշտ էր արված՝ հարգանքով ու արժանավայել, սակայն...

Բանն այն է, որ հրապարակի շրջակա շինությունները՝ 20-ականներին ավերված Կաթողիկե եկեղեցու փոխարեն հետագայում կառուցված «Մոսկվա» կինոթատրոնի, նկարիչների միության եւ դրա ցուցասրահի, այնուհետեւ՝ մինչպատերազմյան «դասական» ոճով կառուցված «Երեւան» հյուրանոցի (վերջերս իտալացիների կողմից հիմնովին վերակառուցված), դիմացը՝ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի ընկերության (ԱՕԿՍ), իսկ վերեւ՝ Սանիսլավսկու անվան ռուսական պետական թատրոնի շենքերը գողտրիկ ու մտերմիկ մթնոլորտ են ստեղծում:

Հանրահայտ է նաեւ, որ անկյունագծով կինոթատրոնի դիմաց գտնվող վայրի հավաքատեղի էր: Ասում են, որ այստեղ են Չարենցն ու Դեմիրճյանը երկնել իրենց «Թիֆլիսցի կինոն» ու «Քաջ Նազարը»:

Սակայն «Ասատֆյան» ու «Սբար թայմ» համալիրի եւ Սանիսլավսկու անվ. թատրոնի միջեւ, երկհարկանի կիսախարխուլ մի շենք (Աբովյան փողոց, թիվ 3/2) տեսից գցում է այս գողտրիկ անկյան պատկերը:

Արդյոք ժամանակը չէ՞ վերացնելու այն: Ճիշտ ժամանակն է, քանզի Մեծն Շառլի 80-ամյակի առթիվ կարելի է նշյալ վայրում բարձրացնել նրա տուն-թանգարանը: Դրանով արժանին կհատուցվի մեծ երախտավորին:

Պատմությունը ցույց է տալիս, որ համաշխարհային փառքի արժանացած մեր արվեստագետները սովորաբար, օտար երկնքի տակ, մոռացության են մատնվում: Սակայն «Շառլի տունը» (ես այդպես կանվանեի) կհավերժացնի նրան մայր հայրենիքում:

Տուն-թանգարանը, ըստ իս, կունենա համերգասրահ, որտեղ այժմ եւ մշտապես կներկայացվի նրա մեծ արվեստը, կլինի Շառլ Ազնավուրի մեծարման, ինչպես եւ՝ հանդիսության վայր, գուցեեւ՝ ուխտատեղի: Կլինի նաեւ հարկաբաժին, որտեղ մեծ հայը կհանգրվանի եւ կվայելի հանգիստը հայրենական հարկի տակ:

Հասկանալի է, որ սույն կառույցն ավարտուն տեսք կստանա հրապարակին:

Թերեւս տեղին չէ խոսել Շառլ Ազնավուրի արժանիքների մասին: Եթե մեկ պարբերությամբ ասենք, ապա նա համամարդկային արժեքներով օժտված արվեստագետ է: Նա է մեր ազգը պանծացրել օտար ափերում: Նա է, որ իր խնայողությունները տրամադրել է ադեսի գոտուն, Արցախին եւ հայրենի ընչազուրկներին:

Վստահ եմ, եթե հազար ու մի հոգեւոր ծանրաբեռնված մեր ժողովրդի ուշադրությանը ներկայացվի հանգանակության առաջարկ, սիրով կընդունվի: Սակայն աղքատացած ու աղքատացող, թեեւ արվեստասեր ու երախտագետ, մեր հանրությունից այդ պահանջելը, կարծում եմ, բարոյապես ճիշտ չէ:

Մնում է այս առթիվ ակնկալել հայրենական եւ սփյուռքահայ գործարարների աջակցությունը: Շմոռանանք, որ պարտավոր ենք արժանին հատուցել արժանավորին:

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

«Միկան» գավաթը հանձնեց եզրափակիչի մասնակիցներին

Ռուբեն Հայրապետյանի մամուլի ասուլիսը

Մայիսի 9-ին, ժամը 20-ին, «Հանրապետական» մարզադաշտում կսկսվի գավաթի եզրափակիչ հանդիպումը «Բանանցի» եւ «Փյունիկի» միջեւ: Այդ օրը հայտնի կդառնա գավաթի նոր տերը: Իսկ մինչ այդ պատվավոր մրցանակը գրեթե մեկ տարի հանգրվանել էր ՀՖ գավաթակիր «Միկա» ակումբում: Ֆուտբոլի Հայաստանի Ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանի նախաձեռնությամբ երեկ «Միկա» ակումբում տեղի ունեցավ գավաթի հանձնման հանդիսավոր արարողություն, որն այսուհետեւ դառնալու է ավանդական: «Միկայի» ավագ Արշաքես Ադամյանը գավաթը հանձնեց եզրափակիչի մասնակից թիմերի ավագներ Արթուր Մկրտչյանին ու Հովհաննես Դեմիրճյանին: Վերջիններս էլ այն հանձնեցին Ռուբեն Հայրապետյանին: Այնուհետեւ Ֆեդերացիայի նախագահը պատասխանեց լրագրողների հարցերին:

Անդրադառնալով ՀՖ առաջնությանը, Ֆեդերացիայի նախագահն իր գոհունակությունը հայտնեց ծավալվող անհաշտ մրցակցությունից, թիմերի խաղամակարդակներից, ինչի արդյունքում նախկինի նման այլեւս ֆուտբոլային անսովոր հաշիվներ չեն գրանցվում: Ինչ վերաբերում է մրցավարությանը եւ տեսչությանը, ապա նախագահը դժգոհ է նրանց գործունեությունից, թեեւ արդյունքի վրա ազդած կողմից սխալներ թույլ չեն տրվել:

Ռուբեն Հայրապետյանը շատ գոհ էր Թուրքմենստանի հավաքականի հետ ընտրանու խաղից: Նրան հատկապես ուրախացրել էր այն հանգամանքը, որ տղաները 90 րոպե շարունակ աշխատեցին, կատարեցին մարզիչների առաջադրանքը, գլուխ չպահեցին, բարձր մակարդակի խաղ ցուցադրեցին, հասան խաղային եւ տարածքային բացահայտ առավելության: Ինչ վերաբերում է Ռուսաստանի հավաքականի հետ ընկերական խաղ անցկացնելու հնարավորությանը, ապա նախագահը նշեց, որ ռուսները պատշաճորեն չեն դիմել իրենց, իսկ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան մտադիր է բանակցել այդ հարցով Վլադիկավկազ կոլոսկովի հետ, մանավանդ որ Միխայ Ստոյկիցան կողմ է նման հանդիպումների անցկացմանը: Կա տարբերակ նաեւ Հունգարիայի հավաքականի հետ ընկերական խաղ անցկացնելու: Նշվեց, որ մինչեւ 19 տարեկանների հավաքականի նախապատրաստությունը նորմալ է ընթանում: Ընդհանրապես բոլոր հավաքականների աջակցելն էլ առավելագույն խնդիր է դրվում: Ինչ վերաբերում է երիտասարդական հավաքականին, ապա, ըստ Ռուբեն Հայրապետյանի, մինչեւ 19 տարեկանների հավաքականի տղաները պիտի կազմեն թիմի կորիզը: Իսկ թե ո՞վ կփոխարինի Միխայ Ստոյկային, առայժմ պարզ չէ: Շատ բան պայմանավորված է նրանով, թե ինչպե՞ս կդրսեւորի իրեն Վարդան Մինասյանը 19 տարեկանների հետ աշխատելիս:

Կրկին խոսք գնաց մարզադաշտերի մասին: Ռուբեն Հայրապետյանը նշեց, որ մինչեւ ամսվա վերջ վերակառուցումից հետո իր հյուրընկալ դռները կրկին կբացի «Նաիրի» մարզադաշտը: Ինչ վերաբերում է մարզադաշտի շրջակայքում ծավալվող շինարարությանը եւ բենզալցակայաններին, ապա ցավով նշվեց, որ նոր հաղթահարեցի որոշ էլ ոչինչ չի փոխվել: ՖԻՖԱ-ի եւ ՈՒԵՖԱ-ի նոր ծրագրով ՀՖԴ-ին 1 մլն եվրոյի արժեքով ֆրանկ է տրամադրվելու փոքր չափերի (15x30 մ) 25-30 խաղադաշտերի շինարարության համար: Դրանցից 10-ը պետք է կառուցվեն Երեւանում: Ըստ ՖԻՖԱ-ի պահանջների, դրանք պետք է մոտ լինեն բնակելի շենքերին, որպեսզի բնակիչները հնարավորություն ունենան օգտվելու խաղադաշտերից: Իսկ Երեւանում դրանց շինարարության համար անհրաժեշտ հողակտորների հատկացման հարցը լուրջ խնդիր է: Ռուբեն Հայրապետյանի խնդրանքով Կենտրոնի քաղաքացիները երկու խաղադաշտի համար հող է հատկացրել:

Ասուլիսում խոսք գնաց նաեւ մարզիչների եւ բժիշկների որակավորումը բարձրացնելու անհրաժեշտության մասին: ՀՖԴ նախագահը տեղեկացրեց, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել Իսպանիայի, Ֆրանսիայի եւ Իտալիայի ֆեդերացիաների հետ մեր մարզիչներին այդ երկրներում ուսուցանելու հարցում: Ռուբեն Հայրապետյանն իր դժգոհությունն արտահայտեց մեր փորձառու մարզիչներից, որ նրանք դժկամությամբ են մասնակցում վերապատրաստման դասընթացներին, իսկ ահա երիտասարդներն իրենք են դիմում՝ իրենց նման հնարավորություն տալու խնդրանքով: Լուրջ խնդիր է դարձել նաեւ թիմերի բժիշկների հարցը, նրանց որակավորման բարձրացման անհրաժեշտությունը: Այս հարցով եւս աշխատանքներ են տարվում: Մասնավորապես, նախագահը բանակցել է Ռումինիայի հավաքականի բժշկի հետ՝ նրան երեւան հրավիրելու հարցով, սակայն վերջինս հրաժարվել էր:

ՖՈՒՏԲՈԼ

«Այաքսը» Հոլանդիայի չեմպիոն

Հոլանդիայի առաջնության 32-րդ տուրում որոշվեց երկրի չեմպիոնը: Հյուրընկալվելիս 5-0 հաշվով հաղթելով հետնապահներից մեկին «Զվոլեյին», Ամստերդամի «Այաքսը» 29-րդ անգամ երկրում ճանաչվեց ուժեղագույնը: Այդ խաղում Սոնկը «հեթ-տրիկի» հեղինակ դարձավ: «Այաքսի» գլխավոր հակառակորդ «Էյնդհովենը» եւս խոշոր հաշվով (5-0) հաղթեց «Վոլենդամին»: Թիմի ռմբարկու Մաթեյա Կեժմանը 2 գոլ խփեց: «Էյնդհովենն» ապահովեց արծաթե մեդալները, քանի որ նրա գլխավոր մրցակից «Ֆեյենորդը» «Գրոնինգենի» հետ խաղում վերջին րոպեին գոլ բաց թողեց եւ պարտվեց (1-2):

«Սեւ մայրցամաքի» դափնեկիրները

Աֆրիկայի ֆուտբոլի կոնֆեդերացիան որոշել է մրցաշրջան-2003-ի դափնեկիրներին: «Սեւ մայրցամաքի» լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել իսպանական «Մայորկայի» եւ Կամերունի հավաքականի 23-ամյա հարձակվող Սամյուել Էտոն: Հարցման արդյունքներով նա առաջ անցավ Կոտ դ'Իվուարի հավաքականի խաղացող Դիդյե Դրոգբայից եւ նիգերիացի Օգուստին Օկոչայից:

Մրցանակաբաշխության ընթացքում հայտնի դարձան նաեւ մյուս դափնեկիրները: Լավագույն հավաքական է ճանաչվել Կամերունի ընտրանին: Իսկ ահա, լավագույն մարզչի կոչմանն է արժանացել ոչ թե կամերունցիների մարզիչ Վինֆրիդ Շեֆերը, այլ Կադիրի Իկիանը, որի գլխավորությամբ նիգերիական «Էնիմբա» թիմը հաղթող էր ճանաչվել աֆրիկյան երկրների չեմպիոնների լիգայի մրցաշարում: Այդ մրցաշարի լավագույն ֆուտբոլիստի համար սահմանված մրցանակը հանձնվեց եգիպտական «Իսմայիլ» ակումբի մալիացի հարձակվող Դրաման Տրաորեին: «Ինտերի» նիգերիացի խաղացող Օբաֆեմի Մարթենսը ճանաչվել է լավագույն երիտասարդ ֆուտբոլիստ: Իսկ ամենամեծ առաջընթացը նկատվել է Ռուանդայի հավաքականի խաղում, որն առաջին անգամ էր մասնակցում Աֆրիկայի գավաթի եզրափակիչ մրցաշարին:

Ուղեգրերը բաշխվեցին

Չինաստանի եւ Ճապոնիայի ֆուտբոլի կանանց հավաքականներն իրավունք ստացան հանդես գալու Աթենքում կայանալիք օլիմպիական խաղերում: Ընտրական մրցաշարի եզրափակիչում թիմերի մրցավեճը 1-0 հաշվով շահեցին չին ֆուտբոլիստուհիները: Ճապոնիայի ընտրանին կիսաեզրափակիչում պայքարից դուրս էր մղել Ասիայի չեմպիոն Հյուսիսային Կորեայի հավաքականին: Մրցակարգի համաձայն, ընտրական մրցաշարում առաջին երկու տեղերը զբաղեցրած թիմերն օլիմպիական ուղեգիր էին ձեռք բերում:

Հաջող մեկնարկ

Հռոմում մեկնարկած թենիսի միջազգային մրցաշարում հաջող է հանդես գալիս Դավիթ Նալբանդյանը: Առաջին փուլում Դավիթը պարտության մատնեց շվեդ Սոդերլինգին (6-4, 6-4): Առաջին փուլի արգելքը հաջողությամբ հաղթահարեց նաեւ Ալբերտ Կոստան՝ պարտության մատնելով Ալեխ Կարեֆային (7-6, 6-1): Այենգ Շալկենը հաղթեց Ուիլյամ Արթուրին (6-3, 4-6, 6-1), իսկ Կառլոս Մոյան առավելության հասավ Ալբերտ Մարտինի նկատմամբ (6-4, 6-2): Պայքարը շարունակում են նաեւ Սոդերլինգ, Գոնսալեսը, Սաբալեսան, Հենմանը, Սանչեսը, Ֆերերը, Սարեսան, Ստեփանեկը, Պավելը եւ Կառլովիչը:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Աղ N 1

առ 01.01.2004 (ամսաթիվ, ամիս, տարի)

Կազմակերպության անվանումը «ՓԻ-ԷՄ-ԱՐ-Է» ՓԲԸ ծածկագիրը 39076225

Փաստացի գործունեության վիճակախաղերի կազմակերպում
հիմնական երկու տեսակները
Պետական ռեգիստրում գրանցման համարը 273.120.03504
Հարկ վճարողի հաշվառման համարը 01545993
Շափի միավորը հազ. դրամ
Գտնվելու վայրը Խանջյան 50
Փաստացի գործունեության իրականացման վայրը

ԱԿՏԻՎ	տող	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
I. Ոչ ընթացիկ ակտիվներ		
Ոչ նյութական ակտիվներ	030	14583
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	14583
II. Ընթացիկ ակտիվներ		
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում	210	100
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	14683
ՊԱՍԻՎ		
III. Սեփական կապիտալ		
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	240	100
Կուտակված շահույթ	270	(10434)
V. Ընթացիկ պարտավորություններ		
Կարճաժամկետ փոխառություններ	380	25012
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	5
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	25017
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	14683

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2003

(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

Աղ N 2

Ցուցանիշի անվանումը	տող	Հաշվետու տարի (ժամանակաշրջան) սեղմված
Իրացման ծախսեր	040	10417
Վարչական ծախսեր	050	17
Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	(10434)
Գործառնական շահույթ (վնաս)	090	(10434)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	(10434)
Զուտ շահույթ (վնաս) նախորդ շահութահարկի գծով ծախսի (եկամտի) ազդեցությունը	160	(10434)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի (եկամտի) ազդեցությունից հետո	180	(10434)

Սույն հոդվածների լրացումը պարտադիր է այն բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են, կամ որոնք գտնվում են արժեթղթերի բաց (կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը) թողարկելու գործընթացում: Սույն նոնակարգվող) տուկայում սովորական բաժնետոմսեր կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսեր թողարկելու գործընթացում: Սույն հոդվածների գումարը ցույց է տրվում դրամներով (ոչ թե հազար դրամներով):

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2003

Աղ N 3

Սեփական կապիտալի տարրերի անվանումը հոդվածները	տող	II. Հաշվետու տարի (ժամանակաշրջան) Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	Զուտ գումարը
	010	100	100
Մնացորդը առ	100	100	100
II. Հաշվետու տարի (ժամանակաշրջան)		Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը
			100
			(10434)
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)		(10434)	(10334)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2003թ.		(10334)	

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2003

Աղ N 5

Ոչ նյութական ակտիվներ
Դասի անվանումը

Աղյուսակ 7

Դասի անվանումը	Տող	Մնացորդային գումարը	ընդամենը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջ.) մեջ մնացած	մեջ մնացած
Լիցենզիաներ եւ վստահագրեր (ֆրանշիզներ)					
- հաշվեկշռային արժեք	040		14583	14583	14583
- արժեք	041	100	25000	25000	25000
- կուտակված ամորտիզացիա	042		10417		10417
Ընդամենը					
- հաշվեկշռային արժեք	100		14583	14583	14583
- արժեք	101		25000	25000	25000
- կուտակված ամորտիզացիա	102		10417		10417

Հաշվեկշիռ հոդվածների մարման (փոխհատուցման) ժամկետների դասակարգումը Աղյուսակ 16

Երկարաժամկետ գումարներ	տող ԱԿՏԻՎ	Կարճաժամկետ գումարներ	
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010		
Ոչ նյութական ակտիվներ	020	14583	
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	050	14583	
II. Ընթացիկ ակտիվներ			
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում	110	100	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	120	100	
Ընդամենը ակտիվներ	130	14683	
ՊԱՍԻՎ			
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	140		100
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում	150		(10434)
	151		
Ընդամենը սեփական կապիտալ	180		(10334)
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	200		25017
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	210		25017
Ընդամենը պասիվներ	220		14683

Հաշվարկային հաշվեկշռին կից ծանոթագրությունների այլ բացահայտումներ

Սույն կետում պահանջվող բացահայտումները լրացնելիս ավելացվում են լրացուցիչ թերթիկներ՝ էջակալելով որոնք 17 ա, 17 բ եւ այլն:

5.3.4. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ

Ֆինանսական արդյունքների հաշվետվություն ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ Աղյուսակ 18

Ցուցանիշի անվանումը	տող	Հաշվետու տարի (ժամանակաշրջան) սեղմված
Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	
Մասնաբաժնի եւ ամորտիզացիայի գծով ծախսումներ	070	(10417)
Գործառնական այլ ծախսումներ եւ ծախսեր	080	(17)
Գործառնական շահույթ (վնաս)	090	(10434)
Ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վնաս)	100	0
Սովորական գործունեությունից շահույթ	110	(10434)
Զուտ շահույթ (վնաս) նախորդ շահութահարկի գծով ծախսի (եկամտի) ազդեցությունը	130	(10434)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի (եկամտի) ազդեցությունից հետո	150	(10434)

Ղեկավար՝ Վահան Հարությունյան

Գլխավոր հաշվապահ

ՄՈՍԿՎԱ

«02» հաղորդաշարը արժանացավ փառատոնի դիպլոմին եւ գավաթին

Ապրիլի 22-27-ը Մոսկվայում անցկացվեց դեռեսկիվ ֆիլմերի եւ իրավապահ մարմինների գործունեությանը նվիրված հեռուստահաղորդումների միջազգային 6-րդ փառատոնը: ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչությունը ի դեմս «02» հաղորդաշարի ստեղծագործական խմբի, մասնակցեց այդ փառատոնին՝ «Հանցագործություն եւ պատիժ» խորագրի ներքո: Մասնակից 3 տասնյակից ավելի երկրների ներկայացուցիչներ ներկայացրել էին շուրջ 200 աշխատանքներ: «02» հաղորդաշարի մրցակիցներն էին Կոստրոմայի, Սամարայի, Եկատերինբուրգի պետական հեռուստաընկերությունները, մոսկովյան НТВ, RENTV մեդիագործակալությունները, «Կրիմինալնայա Ռոսիա», «Վերսիա» հեռուստաընկերությունները, «Դիտսի» կինոընկերությունը, ինչպես նաեւ Ղազախստանի, Բելառուսի, Ֆրանսիայի, Կանադայի, Սինգապուրի, Իսպանիայի, Արգենտինայի եւ Հարավային Կորեայի ճանաչված կինոընկերությունները: Մասնագիտական ժյուրին միաձայն քվեարկությամբ «Հանցագործություն եւ պատիժ» անվանակարգում հաղթանակը շնորհեց «02» հաղորդաշարին՝ արժանացնելով փառատոնի դիպլոմին եւ գավաթին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

For Your Internal News of Armenia Log on to

www.azg.am

In Armenian Russian, English, and Turkish

ՀՀ Կենտրոնական բանկը 5.05.2004 թ. ժ. 9.00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	548.81	543.30	554.30
EUR	1	եվրո	661.92	657.90	665.90
RUR	1	ռուս. ռուբլի	18.95	17.80	20.10

ՄՈՅՈՒԹՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագիր

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը տեղեկացնում է 2004 ԱՄՆ հարկային տարվա ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրի երկրորդ փուլի բացման մասին: Ծրագրի նպատակն է աջակցել ժողովրդավարության զարգացմանը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ամրապնդմանն ու քաղաքացիական կրթության տարածմանը Հայաստանում:

Հիմնական պայմաններ

Ներկայացվող ծրագրերը պետք է վերաբերեն Հայաստանում քաղաքացիական հասարակության խթանմանը, ժողովրդավարական գործընթացների խորացմանը եւ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի մեծացմանը: Ծրագրերը պետք է ուղղակիորեն կապված լինեն ժողովրդավարական հաստատությունների զարգացմանը եւ հստակորեն սահմանեն, թե առաջարկվող գործունեության արդյունքում ինչ որոշակի ժողովրդավարական զարգացումներ տեղի կունենան Հայաստանում:

Ծրագրի շնորհառուներ կարող են դառնալ հասարակական կազմակերպություններն ու անկախ լրատվամիջոցները, որոնց գործունեությունն ուղղված է այս նպատակների կենսագործմանը: Դրամաշնորհները չեն կարող օգտագործվել կուսակցական քաղաքական գործունեության նպատակով:

Դրամաշնորհների գերակիր մասի գումարը չի գերազանցի 10.000 ԱՄՆ դոլարը, եւ միայն չափազանց լավ հիմնավորված ծրագրերի դեպքում կարող է տրամադրվել մինչեւ 24.000 ԱՄՆ դոլար: Շնորհառուների կողմից համաֆինանսավորման աղբյուրների որոնման քայլերը ողջունելի են:

Դրամաշնորհները պետք է օգտագործվեն կոնկրետ ծրագրերի իրականացման համար: Ծրագրային առաջարկներում պետք է ներկայացվեն իրագործելիք խնդիրները, ակնկալվող արդյունքները եւ շահառուների շրջանակը: Ծրագրերը պետք է համահունչ լինեն կազմակերպության երկարաժամկետ նպատակների հետ: Ծրագրում պետք է նշվի ծրագրային աշխատանքների ժամկետը (ծրագրի սկզբի եւ ավարտի ամսաթվերը), որը չի կարող գերազանցել մեկ օրացուցային տարին:

Անհրաժեշտ է ներկայացնել ծրագրային ծախսերին վերաբերող մանրամասն եւ իրատեսական բյուջե: Բյուջեն հաշվարկվում է ԱՄՆ դոլարով եւ պետք է հստակորեն կապված լինի նկարագրական առաջարկում ներկայացվող ծրագրային աշխատանքներին:

Ներկայացված առաջարկների գնահատման ժամանակ հաշվի է առնվում ծրագրի համապատասխանությունը ժողովրդավարության հանձնաժողովի դրամաշնորհային ծրագրի նպատակներին, նախանշված ծրագրային խնդիրների, գործունեության մարտավարության եւ շնորհառուների խմբի ընտրության նպատակահարմարությունը, ինչպես նաեւ հայտատու կազմակերպության կարողությունը՝ իրականացնելու առաջարկվող ծրագրային նպատակները:

Դեսպանատունն իրավունք ունի իրականացնել դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի կամ գործողությունների ուղեկցում (մոնիտորինգ): Դրամաշնորհային միջոցների հաշվին ֆինանսավորվող ծրագրի ավարտին շնորհառուն դեսպանատանը պետք է ներկայացնի հաշվետվություն ծրագրի ընթացքի վերաբերյալ (ծրագրային հաշվետվություն) եւ ֆինանսական հաշվետվություն:

Հայտի ձեւերը կամ ծրագրի պայմանների մասին մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ԱՄՆ դեսպանատնից՝ ք. Երեւան, Բաղրամյան 18 հասցեով (հյուպատոսական մուտք), կամ կարող եք այցելել ԱՄՆ դեսպանատան ինտերնետային էջը՝ http://www.usa.am/announcements.html: Բոլոր հայտերը պետք է լրացվեն անգլերեն լեզվով եւ ներկայացվեն ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժին ոչ ուշ, քան 2004 թ. մայիսի 27-ը (մինչեւ ժամը 17:30):

Կոմունալ ենթակառուցվածքային նախագիծ- Հայաստան
Ջրաչափերի ձեռքբերման մրցույթի հրավեր

Ոռոգելի ջրամատակարարման եւ ջրահեռացման ընկերությունը, «Նոր ակունք» ՓԲԸ-ն եւ Ք. Արմավիր ՀՀ, հրավիրում է փորձառու կազմակերպություններին մասնակցել 5500 կենցաղային սառը ջրի ջրաչափերի եւ լրացուցիչ պարագաների ձեռքբերման մրցույթին:

Ձեռքբերումը կկատարվի «Կոմունալ ենթակառուցվածքային նախագծի» սահմաններում, որը ֆինանսավորվում է հայ-գերմանական ֆինանսական համագործակցության վարկի միջոցով, KfW- Kreditanstalt fuer Wiederaufbau կողմից: Պարանների վճարումը կկատարվի KfW բանկի միջոցով՝ ուղիղ վճարման եղանակով:

Մրցութային փաստաթղթերի ամբողջ փաթեթը անգլերենով կարող է գնվել՝ ներկայացնելով գրավոր դիմում ներքոհիշյալ հասցեով եւ վճարելով անվերադարձ գումար, որը կազմում է 150 եվրո կամ համարժեք դրամ յուրաքանչյուր փաթեթի համար, 2004 թ. մայիսի 5-30-ն ընկած ժամկետում: Առաջարկների ներկայացման ժամկետ է համարվում 2004 թ. հունիսի 30-ը: Մրցութային փաստաթղթերի համար վճարումը կկատարվի բանկային հաշվարկների հիման վրա: Դրամական փոխանակության պատճենն անհրաժեշտ է կցել դիմումին:

Բանկ HSBC
Մասնաճյուղ՝ Երեւան, Հայաստան
Պատճեն «Նոր ակունք» ՓԲԸ
Հ/հ (եվրո) 001150 648102
Հ/հ (դրամ) 001150 648001

Հեռագրա տեղեկությունների համար դիմել
«Նոր ակունք» ՓԲԸ
Պրն Ն. Գեւորգյան, գլխավոր տնօրեն
Հայաստանի Հանրապետություն, Արմավիր,
Սաստղի 59 փ.
Հեռ.՝ 00374 37-50582
Ֆաքս՝ 00374-3750982

HUBERT HUMPHREY FELLOWSHIP PROGRAM

The Public Affairs Section of the Embassy of the United States of America is pleased to announce the annual competition for the **Hubert Humphrey Fellowship** in the United States for the 2005-2006 academic year.

The .Humphrey Fellowship Program is a one year, full scholarship program offered to mid -career professionals who have a commintment to public service, are in leadership positions and at a point in their careers to fully benefit from a self-defined program of independent study at a leading U.S. university. The program awards a certificate from the U.S. Government and *it is not designed to deliver an advanced degree*. The Hubert H. Humphrey Fellowship Program brings accomplished professionals from developing countries and transition states to the United States at a midpoint in their careers for a year of study and related professional experiences. Fellowships are granted competitively to professional candidates with a commitment to public service in either the public or private sector.

BASIC REQUIREMENTS FOR THE SCHOLARSHIP

* Armenian citizenship
* A Bachelor's degree
* Five years of substantial professional experience
* Demonstrated leadership qualities and a record of public service
* Fluency in English

ELIGIBLE FIELDS ARE:

- Natural resources and environmental management
- Public policy analysis and public administration
- Economic development
- Agricultural development/ agricultural economics
- Finance and banking
- Human resource management/personnel
- Urban and regional planning
- Public health policy and management
- Technology policy and management
- Educational planning
- Law and human rights
- Communications /journalism

*Drug abuse epidemiology/prevention /education/ treatment (NIDA)

*The field of drug abuse includes drug abuse with an emphasis on drug abuse epidemiology, education, prevention and treatment. NIDA applicants should hold an earned doctoral degree in medicine, health, biomedical, behavioral, or social science, candidates holding master's degree and who have substantial professional experience and/or research background will also be considered. For NIDA applicants a short additional application is required and may be obtained from the U.S. Embassy.

APPLICATION PROCEDURE AND COMPETITION SCHEDULE

Interested applicants must apply to the U.S. Embassy. After national selection, the finalist will take the TOEFL exam. Applicants with TOEFL scores lower than 525 paper-based and 195 computer-based will be technically ineligible. The final nominations are reviewed in the United States by independent review committees and the J. William Fulbright Foreign Scholarship Board. Awards are announced by March each year for Fellowships beginning in August/September.

- Applications may be obtained from the Public Affairs Office of the U.S. Embassy in Yerevan, or downloaded from the Embassy web site: http://www.usa.am. 'All materials must be typed or computer-generated. The application includes a preliminary test of English language ability, which will be conducted only for those who will be invited for an interview after the first selection round by the U.S. Embassy.

Completed applications must be submitted to Anahit Khachatryan, Cultural Affair" Assistant, Public Affairs Office, U.S. Embassy, at 52-98-25 or 52-70-01, ext: 4477, who may also be contacted for more information about the fellowship.

FREQUENTLY ASKED QUESTIONS

- How strict are the deadlines? Deadlines are firm.
- If I was not successful in previous competitions, can I apply again? Yes.
- What are the selection criteria? The following factors are considered: leadership ability, commitment to public service, candidate's objectives and program plan/personal statement, professional and personal qualifications, need for the program and language proficiency. Preference will be given to candidates with little or no previous experience in the United States.
- Can I complete my Masters Degree while on the program? No. The Humphrey Fellowship is a non-degree program.
- What are the basic benefits? The Humphrey Fellowship provides international travel, tuition and university fees, accident/sickness insurance, monthly maintenance allowance and funding for books and professional activities. The Humphrey Program does not provide financial support for accompanying dependents.
- Can family members accompany? The Humphrey award does not include an additional allowance for dependents. The Fellow may request permission for dependents to join him/her in the US, but must show proof of adequate personal funds to cover living expenses and dependent's health insurance.
- Do I have to arrange university affiliation in the United States? No. There is no provision for fellows to request placement at any particular university. The universities are selected on a competitive basis. Each university is chosen based on institutional resources and the level of support and guidance'it offers to the participants.
- Should I mail references together with the application package? Referrers should fax directly to the Public Affairs Office of the U.S. Embassy, or enclose the letters in separate sealed envelopes in the application package.
- When should I submit diploma transcripts/translations? Since this is costly, we require it only for the finalists. Please make sure you will be able to submit it when you are selected as a finalist. If you are unable to submit it, you will be considered as ineligible.

Deadline for submission: June 11, 2004.

ԳՈՎԱԳԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 4. 05. 2004 Գինը՝ 100 դրամ